

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ



Արդշինբանկ

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

Թողարկող՝
Տեղաբաշխող՝
Արժեթղթերի տեսակը՝

«Արդշինբանկ» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ
անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային
պարտատոմս

Արժեթղթի ձևը՝
Արժեթղթերի քանակը՝

ոչ փաստաթղթային
առավելագույնը՝ 600,000 (վեց հարյուր հազար) հատ
ԱՄՆ դոլարով, 60,000 (վաթսուն հազար) հատ
Եվրոյով, 400,000 (չորս հարյուր հազար) հատ ՀՀ
դրամով

Արժեթղթերի անվանական արժեքը՝
Արժեթղթերի թողարկման ծավալը՝

100.00 ԱՄՆ դոլար, 100.00 Եվրո, 10,000.00 ՀՀ դրամ
առավելագույնը՝ 60,000,000.00 ԱՄՆ դոլար,
6,000,000.00 Եվրո, 4,000,000,000.00 ՀՀ դրամ
Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից
պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող
ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր
առաջ

Արժեկտրոնը՝

Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից
պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող
ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր
առաջ

Շրջանառության ժամկետը՝

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:**


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	5
Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	5
Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր.....	10
Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ.....	13
Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն.....	15
Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն.....	15
Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները	17
Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը	19
Բանկի ամփոփ ֆինանսական տվյալներ.....	21
 ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	21

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Կարեն Սաֆարյան անուն ազգանուն	Խորհրդի նախագահ պաշտոն	 ստորագրություն	29.11.2019թ. ամսաթիվ
Աբել Ազանբեգյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արամ Անդրեասյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	 ստորագրություն	29.11.2019թ. ամսաթիվ
Գարեգին Թոսունյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Վաչե Գաբրիելյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Դմիտրի Լադիկով-Ռոն անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Անանյան անուն ազգանուն	Վարչության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Արզոյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն պաշտոն	 ստորագրություն	29.11.2019թ. ամսաթիվ
Արմեն Գասպարյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արթուր Գյուլագյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն պաշտոն	 ստորագրություն	29.11.2019թ. ամսաթիվ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Կարեն Սաֆարյան անուն ազգանուն	Խորհրդի նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արել Ազանբեգյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	 ստորագրություն	28.11.2019թ. ամսաթիվ
Արամ Անդրեասյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Գարեգին Թոսունյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Վաչե Գաբրիելյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Դմիտրի Լադիկով-Ռուս անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Անանյան անուն ազգանուն	Վարչության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Արզոյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Գասպարյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արթուր Գյուլագյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Լ ԼՆՁԻՆՔ

«Ա՛յ Ենք ստորագրող անձինք, Ի ռավաստիացնում ենք, Ի րոգործադրել ենք լրոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Լ շարժ սյու, Ի հենք ի ռավաստիացնում ենք, Ի րումեր լավագույն տեղեկացվա ռ. տյամ ռամաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, ո թոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բ ռովանդակությունը»

Ստորագրող Լ անձինք՝

Կարեն Լ Խաչատրյան անուն Լ ազգանուն	Խորհրդի Է ռախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արել Լ Դանբեգյւ սն անուն Լ ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արամ Լ Լնդրեայս սն անուն Լ ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Գարեգին Լ Թոսունյան անուն Լ ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Վաչե Գաբրիելյան անուն Լ ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Դմիտրի Լ ադիկով-Ի Դոն անուն Լ ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	29.11.2019թ. ամսաթիվ
Արտաշ Լ Լնայս սն անուն Լ ազգանուն	Վարչության ռախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Լ Լրզոյան անուն Լ ազգանուն	Վարչության անդամ, Ո իսկերի կառավարման Է լծով ռնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Լ Դասպարյան անուն Լ ազգանուն	Վարչության անդամ, Ո ի պրոֆիլային ակտիվների կառավարման Է լ ռնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արթուր Լ Դյուլազյան անուն Լ ազգանուն	Վարչության անդամ, Կորպորատիվ Է լ իզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Կարեն Սաֆարյան անուն ազգանուն	Խորհրդի նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Աբել Ազանբեգյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արամ Անդրեասյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Գարեգին Թոսունյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	29.11.19 ամսաթիվ
Վաչե Գաբրիելյան անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Դմիտրի Լադիկով-Ռոն անուն ազգանուն	Խորհրդի անդամ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Անանյան անուն ազգանուն	Վարչության նախագահ պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արտակ Արզոյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արմեն Գասպարյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Ոչ պրոֆիլային ակտիվների կառավարման տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ
Արթուր Գյուլագյան անուն ազգանուն	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն պաշտոն	ստորագրություն	ամսաթիվ

Դավիթ Սարգսյան
անուն ազգանուն

Վարչության անդամ,
Ֆինանսական տնօրեն
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ

Հարություն Իսաիրյան
անուն ազգանուն


Վարչության անդամ,
Գործառնական տնօրեն
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ

Արտակ Խաչատրյան
անուն ազգանուն


Վարչության անդամ,
Մանրածախ բիզնեսի տնօրեն
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ

Արմեն Սարգսյան
անուն ազգանուն


Վարչության անդամ,
Կազմակերպչական
զարգացման և
տեղեկատվական
տեխնոլոգիաների գծով
տնօրեն
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ

Հովհաննես Մկրտիչյան
անուն ազգանուն

Վարչության անդամ,
Գլխավոր հաշվապահ
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Արտակ Անանյան
անուն ազգանուն

1 Վարչության նախագահ
պաշտոն


ստորագրություն

29.11.2019թ.
ամսաթիվ



ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել ծրագրային ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ <http://www.ardshinbank.am>:

1) Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները՝

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Արդյունաբերաշինարարական բանկ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое акционерное общество «Промышленно-строительный банк»

անգլերեն՝ “Industrial Construction Bank” closed joint stock company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «Արդշինբանկ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “Ардшинбанк”

անգլերեն՝ “Ardshinbank” CJSC

Բանկի հիմնադրման երկրին է՝

Հայաստանի Հանրապետություն

Բանկի պետական գրանցման վայրն է՝	Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան 0015, ՀՀ
Բանկի պետական գրանցման համարն է՝	83
Բանկի գտնվելու վայրն է՝	Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1, Երևան 0015, ՀՀ
Կապի միջոցները՝	Հեռ.՝ (+37412) 22 22 22 Ֆաքս.՝ (+37410) 59 05 82 Էլ. Փոստ՝ ashb@ardshinbank.am Կայք՝ www.ardshinbank.am

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Բանկ) Ֆոնդային գործառնությունների գծով ավագ դիլեր Մարգարիտ Կասիմյանի հետ՝ (+37410) 59 04 92 հեռախոսահամարով:

1.2 Բանկի համառոտ պատմությունը՝

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն (նախկինում՝ «Արդշինինվեսթբանկ» ՓԲԸ) ստեղծվել է 2002թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում (ՀՀ ԿԲ) 2003թ.-ի փետրվարի 25-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է 0394: Նույն թվականի փետրվարի 27-ին Բանկին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 83 լիցենզիան:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման համակարգի անդամ:

Ստորև ներկայացված է համառոտ պատմական ակնարկ Բանկի զարգացման ժամանակագրական կարևոր նշումներով՝

- ✓ 2003թ. ձեռք է բերել 80 տարվա պատմություն ունեցող և տնտեսության ճյուղերի վարկավորման ուղղությամբ մասնագիտացած «Արդշինբանկ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների զգալի մասը և մասնաճյուղային ցանցը (24 մասնաճյուղ):
- ✓ 2003թ. նոյեմբերին ձեռք է բերել «Հայագրոբանկ» ԲԲԸ բիզնեսի հիմնական մասն իր ենթակառուցվածքների հետ միասին (35 մասնաճյուղ):
- ✓ 2014 թվականին «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ի:
- ✓ 2017 թվականի հունվարի 13-ին օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է «Արդշինբանկ» ՓԲԸ և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ վերակազմակերպում՝ «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ն «Արդշինբանկ» ՓԲԸ-ն միացնելու միջոցով, որի արդյունքում «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարել է, իսկ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն պահպանել է իր գործունեությունը՝ նաև որպես «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ:

1.3 Բանկի կանոնադրական կապիտալը՝

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 52,227,200,000 (հիսուներկու միլիարդ երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 502 272 (հինգ հարյուր երկու հազար երկու հարյուր յոթանասուներկու) հատ սովորական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 20 000 (քսան հազար) հատ A դասի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: 2019 թվականի փետրվարի 13-ին կատարվել է Բանկի

կանոնադրական կապիտալի համալրում 2,000,000,000.00 (երկու միլիարդ) ՀՀ դրամի չափով՝ արտոնյալ բաժնետոմսերի տեսքով:

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերերն են՝

- ✓ «Արինս Գրուպ» ՍՊԸ - 67.966958%
- ✓ «ՌԵԳԻՈՆ» Ֆինանսական արդյունաբերական կորպորացիա ՓԲԸ - 29.516477%

1.4 Բանկի մասնաճյուղերը՝

Ներկայումս բանկն ունի թվով 62 մասնաճյուղ և մեկ ներկայացուցչություն Փարիզում, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Մասնաճյուղերի հասցեները մանրամասն ներկայացված են սույն Ծրագրայի ազդագրի Բաժին 3-ի 3.1.5 կետում:

1.5 Բանկի խմբի կառուցվածքը՝

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերերն են «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն և «ՌԵԳԻՈՆ» ՖԻՆԱՍՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ ՓԲԸ-ն, վերջիններս մասնակցություն ունեն նաև հետևյալ ընկերություններում:

1. **«Արինս Գրուպ» ՍՊԸ** - հանդիսանում է «Պրեմիում Պլազա» ՓԲԸ բաժնետեր,
2. **«ՌԵԳԻՈՆ» ՖԻՆԱՍՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ ՓԲԸ** - հանդիսանում է «Արինս Գրուպ» ՍՊԸ մասնակից, «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ մասնակից, «ԱՐԴՇԻՆ ԻՆԴԱՍՏՐԻ» ՍՊԸ մասնակից, «ՄԲՑ» ՓԲԸ բաժնետեր, «ՓՐԱՅՄ ԳՐՈՒԴ» ՍՊԸ մասնակից, «Արդշին Դեվելոպմենթ» ՍՊԸ մասնակից, «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ մասնակից:

1.6 Բանկի կազմակերպչական կառուցվածքը՝

Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Հավելված 1-ում:

1.7 Բիզնեսի նկարագիրը՝

Բանկի հիմնական գործունեությունը ավանդների ընդունումն է և վարկավորումը, բանկային հաշիվների բացումն ու սպասարկումը, տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը, վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային (ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցումների իրականացումը, այլ բանկային ծառայությունների մատուցումն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները մատչելի են Բանկի ինտերնետային կայքում:

1.8 Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը

Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

	30/09/2019 /աուդիտի չանցած/	31/12/2018 /աուդիտի անցած/	31/12/2017 /աուդիտի անցած/	31/12/2016 /աուդիտի անցած/
Ակտիվներ, այդ թվում՝	672,387,080	672,988,573	568,118,909	548,409,970
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	594,426,059	550,737,189	465,102,932	409,911,910
Հաճախորդներին տրված վարկեր և փոխադրվածություններ	445,067,206	456,757,927	392,011,895	358,004,830
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխադրվածություններ	35,996,140	16,836,802	7,792,148	1,751,265
Բանկերի թղթակցային հաշիվներ	31,790,530	16,191,190	6,473,836	3,872,120
Ռեպո համաձայնագրեր	22,972,714	19,187,413	24,692,440	3,546,813

Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,370,310	5,219,551	34,132,613	16,620,409
Այլ եկամուրքեր ակտիվներ	44,229,159	36,544,306		26,116,473
Եկամուրքեր ակտիվների տեսակարար կշիռը	88%	82%	82%	75%

2) Բանկին և պարտավորումներին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ռիսկերի ճիշտ կանխատեսումը, գնահատումն ու կառավարումը ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հաջողության գրավականն է:

Բանկին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ազդագրի Բաժին 3-ի երկրորդ կետում:

Բանկերն առնչվում են տնտեսության մեջ գոյություն ունեցող գրեթե բոլոր ռիսկերի հետ:

Բանկի գործունեության ընթացքում հատկապես կարևորվում են հետևյալ ռիսկերի կառավարումը:

Վարկային ռիսկ - Բանկի կորուստների ռիսկն է (գումարն է), որն առաջանում է փոխառու(ներ)ի ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման անկարողության կամ վերջիններիս կատարելու ցանկության բացակայության հետևանքով:

Իրացվելիության ռիսկ - կապված է Բանկի պարտավորությունները ժամանակին կատարելու նպատակով անհրաժեշտ բարձր իրացվելի ակտիվներ ձևավորման կարողության հետ: Բանկն այս ռիսկը զսպելու համար կիրառում է մի շարք գործիքներ, մասնավորապես իրացվելի ակտիվների անհրաժեշտ պահուստների ձևավորման և իրացվելիության ճեղքվածքի կառավարման միջոցով:

Գործառնական ռիսկ - անհամապատասխան կամ սխալ ներքին գործընթացների, մարդկային գործոնի, համակարգերի և արտաքին գործոնների ազդեցության հետևանքով առաջացած ուղղակի կամ անուղղակի կորստի հավանականություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը- կապված է Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զսպմանը և չեզոքացմանն ուղղված միջոցառումների հետ, որոնք ներառում են տեղեկատվության գաղտնիության, անընդհատության և ամբողջականության պահպանման նպատակով իրականացվող աշխատանքներ, տեղեկատվության կրկնօրինակում և պահուստավորում, պահուստավորման լրացուցիչ անվտանգություն:

Շուկայական ոլորտ - բանկի շահույթի կամ կապիտալի արժեքի փոփոխության ոլորտ է, կապված ֆինանսական գործիքների շուկայական գների՝ այդ թվում տոկոսադրույքների, արտարժույթային փոխարժեքների և ֆինանսական գործիքների գնային փոփոխությունների հետ:

Տոկոսադրույքի ոլորտ - կապված է տոկոսադրույքների մակարդակի փոփոխության արդյունքում Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցության հետ: Բանկն այս ոլորտը զսպելու համար կառավարում է ինչպես Բանկի տոկոսային ճեղքվածներն ու ոլորտի ենթակա փոփոխականները այնպես նաև կիրառում է ոլորտի զսպման այլ գործիքներ:

Գնային ոլորտ - կապված է շուկայական գների փոփոխության արդյունքում Բանկի ակտիվների և պարտավորությունների՝ գնային ոլորտ պարունակող գործիքների գնային փոփոխության և դրանց հետևանքով Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցության հետ: Բանկն այս ոլորտը զսպելու համար կառավարում է ոլորտի ենթակա ակտիվների/պարտավորությունների ծավալային և որակական փոփոխականները, ինչպես նաև կիրառում է ոլորտի զսպման այլ գործիքներ:

Իրավական ոլորտ - կորուստներ կրելու հավանականություն՝ Բանկի կողմից օրենսդրության պահանջների չպահպանման, Բանկի գործունեության ընթացքում իրավական բնույթի սխալների առաջացման, իրավական համակարգի անկատարության պատճառով,

Համբավի ոլորտ - Բանկի վստահության պահպանման և մասնակիցների, վարկառուների, ներդրողների և այլ հաճախորդների, ինչպես նաև այլ հետաքրքրված

անձանց հետ փոխհարաբերություններում հեղինակության նվազման հետևանքով կորուստների առաջացման ռիսկն է:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ - օրենքների, կանոնակարգերի, համաձայնագրերի, ներքին կանոնների խախտման կամ դրանց անհամապատասխանության արդյունքում կորուստ կրելու հավանականությունն է:

Արտարժույթային ռիսկ - կապված է արժույթային փոխարժեքների փոփոխության արդյունքում Բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցության հետ: Բանկն այս ռիսկը զսպելու համար իրականացնում է ակտիվների, պարտավորությունների և այլ արտահաշվեկշռային հոդվածների գծով արժույթային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված և ցածր ռիսկային քաղաքականություն:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն Ծրագրային ազդագրի Բաժին 2-ի առաջին կետում:

Ինչպես ցանկացած ներդրում, այնպես էլ պարտատոմսերում իրականացվող ներդրումն իր մեջ պարունակում է որոշակի ռիսկային գործոններ: Ներդրողը, հաշվի առնելով Ազդագրում ներկայացված ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը և ծանոթանալով այլ տեղեկատվություններին, պետք է որոշում կայացնի՝ կատարել ներդրում, թե՛ ոչ:

Իրացվելիության ռիսկ - շուկայում առկա իրավիճակից կախված, երկրորդային շուկայում պարտատոմսերն իրացնելու հետ կապված ռիսկերը հնարավոր են: Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Բանկը համապատասխան միջոցներ է ձեռնարկելու՝ այդ թվում շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում:

Արտարժույթային ռիսկ - արժույթային փոխարժեքների տատանումները կարող են բացասական հետևանքներ ունենալ ներդրողների՝ պարտատոմսերից ստացվող եկամուտների վրա: Այդ ազդեցությունը կախված է ներդրողի՝ ստացված եկամուտները հետագայում ՀՀ դրամի կամ այլ արժույթների վերածելու հանգամանքներից:

Տոկոսադրույքի ռիսկ - տոկոսադրույքների մակարդակի տատանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գների վրա, մասնավորապես

տոկոսադրույքների բարձրացման դեպքում նվազում են պարտատոմսերի գները, որոնց արդյունքում ներդրողը կարող է ստանալ ավելի քիչ եկամուտ, քան նախատեսված էր: Սակայն, այս ռիսկը նշանակալի է, երբ ներդրողը վաճառում է պարտատոմսը մինչև մարման ժամկետը:

Վերաներդրման ռիսկ - կարող է ի հայտ գալ այն դեպքերում, երբ ֆինանսական ակտիվից ստացված դրամական հոսքերը (օր.՝ արժեկտրոն) վերաներդրվում են ավելի ցածր եկամտաբերությամբ: Ձեռքբերման պահին սահմանված մինչև մարում եկամտաբերությունը ենթադրում է, որ ներդրողը ստացված եկամուտները վերաներդրում է նույն եկամտաբերությամբ գործիքներում: Նշված ռիսկը կարող է ոչ էական համարվել ներդրման կարճաժամկետ հորիզոն ունեցող ներդրողների համար:

Ինֆլյացիոն ռիսկ - պայմանավորված է ներդրումների ապագա իրական արժեքի անորոշության հետ՝ կախված ինֆլյացիայի մակարդակի փոփոխությունից: Մասնավորապես, ներդրողների կողմից ստացված եկամուտները գնողունակության անկման հետևանքով կարող են ավելի ցածր իրական արժեք ունենալ:

Վարկային/ դեֆոլտի ռիսկ - ցանկացած ներդրող կորպորատիվ պարտատոմս ձեռք բերելիս իր վրա է վերցնում թողարկողի վարկային ռիսկը: Այն իրենից ներկայացնում է հավանականություն, որ բացասական զարգացումների արդյունքում թողարկողը չի կարողանա ժամանակին ամբողջությամբ վճարել արժեկտրոնների վճարումներն և (կամ) մայր գումարները:

3) Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հեռանկարային զարգացման ծրագրի», ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին՝

համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազագույնի հասցնել մի շարք ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:

2018 թվականի արդյունքներով, համաձայն աուդիտի ենթարկված հաշվետվությունների, Բանկի ակտիվներն ավելացել են 18.46%-ով՝ տարեվերջին կազմելով 673.0 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ 21.11%-ով՝ տարեվերջին կազմելով 607.6 մլրդ դրամ, համախառն վարկային ներդրումները՝ 13.49%-ով և կազմել 450.6 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց վարկային պորտֆելն աճել է 5.23%-ով՝ կազմելով 307.9 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց պորտֆելն աճել է 36.64%-ով՝ կազմելով 142.7 մլրդ դրամ:

Հաշվի առնելով Բանկի առաքելությունը և նպատակները, բաժնետերերի դիրքորոշումը, թույլ և ուժեղ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները՝ Բանկը 2019 թվականին իր առջև դրել է հետևյալ հիմնական նպատակները.

- ✓ Հաշվի առնելով շուկայում տոկոսադրույքների որոշակի աճի միտումները, Բանկի ներգրավման քաղաքականությունն ուղղված է լինելու ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդներից ներգրավման ավելացմանը, ներգրավման կառուցվածքի փոփոխությանը ի օգուտ ցպահանջ միջոցների:
- ✓ Շարունակվելու է համագործակցությունը միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների հետ, այդ թվում ՓՄՁ նախագծերով:
- ✓ Վարկային պորտֆելի աճի հետ մեկտեղ շարունակվելու է պորտֆելի դիվերսիֆիկացիայի քաղաքականությունն ի օգուտ առավել բարձր եկամտաբերություն ունեցող մանրածախ վարկերի՝ միաժամանակ կորպորատիվ պորտֆելի աճը շարունակելու է մնալ Բանկի հիմնական բիզնես ուղղությունը:

Բանկը շարունակելու է իրագործել իր առջև դրված խնդիրները, որոնք ուղղված են կորպորատիվ բիզնեսի գծով շուկայական դիրքերի պահպանմանը և մանրածախ բիզնեսի գծով շուկայական դիրքերի բարելավմանը: Բանկը կշարունակի նպաստել Հայաստանի ֆինանսական շուկաներում բանկային ծառայությունների որակի

բարձրացմանն ու դրանց նկատմամբ հաճախորդների վստահության ամրապնդմանը՝ տնտեսության բոլոր ոլորտների հաճախորդներին առաջարկելով նրանց պահանջներն առավելագույնս բավարարող բանկային ծառայություններ:

2019 թվականի ընթացքում՝ մինչև սույն ծրագրային ազդագրի ներկայացման օրը՝ 09.04.19թ., Բանկի հիմնական ֆինանսական ցուցանիշների և գործունեության էական փոփոխություն տեղի չի ունեցել, և Բանկը միտված է պահպանել ակտիվների և մնացած հիմնական ցուցանիշների շարունակական աճը:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր առկա չեն, բացակայում և չեն սպասվում կազմակերպական փոփոխություններ:

4) Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն

2015-2018 թթ. Բանկի ֆինանսական գործունեության աուդիտն իրականացվել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ կողմից.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան փող. 26/1 շենք, «Էրեբունի-Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ, հեռ. + 374 (10) 566 762, ֆաքս + 374 (10) 566 762, www.kpmg.am:

5) Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- ✓ Բանկի բաժնետերերի Ընդհանուր ժողովը
- ✓ Բանկի Խորհուրդը
- ✓ Բանկի կոլեգիալ գործադիր մարմինը՝ Վարչությունը
- ✓ Բանկի միանձնյա գործադիր մարմինը՝ Վարչության նախագահը:

5.1 Բանկի բաժնետերերը

Բանկի նշանակալից /ձայնի իրավունքով բաժնետոմսերի տիրապետող/ բաժնետերերը ներկայացված են ստորև.

	Անվանում	Բաժնեմաս
1	«Արինս Գրուպ» ՍՊԸ	67.966958%
2	«ՌԵԳԻՈՆ» Ֆինանսական արդյունաբերական կորպորացիա ՓԲԸ	29.516477%

5.2 Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը բաղկացած է 6 անդամներից՝ նախագահ և հինգ անդամ:

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1	Կարեն Սաֆարյան	Խորհրդի նախագահ	ավելի քան 24 տարի
2	Աբել Ազանբեգյան	Խորհրդի անդամ	ավելի քան 30 տարի
3	Արամ Անդրեասյան	Խորհրդի անդամ	ավելի քան 39 տարի
4	Գարեգին Թոսունյան	Խորհրդի անդամ	ավելի քան 21 տարի
5	Վաչե Գաբրիելյան	Խորհրդի անդամ	ավելի քան 29 տարի
6	Դմիտրի Լադիկով-Ռոն	Խորհրդի անդամ	ավելի քան 26 տարի

5.3 Բանկի վարչությունը

Բանկի Վարչությունը կազմված է 9 անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառություն
1	Արտակ Անանյան	Վարչության նախագահ	ավելի քան 21 տարի
2	Արտակ Արզոյան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն	ավելի քան 23 տարի

3	Արմեն Գասպարյան	Վարչության անդամ, Ռազմավարական զարգացման տնօրեն	ավելի քան 10 տարի
4	Արթուր Գյուլազյան	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի տնօրեն	ավելի քան 16 տարի
5	Դավիթ Սարգսյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն	ավելի քան 20 տարի
6	Հարություն Իսախրյան	Վարչության անդամ, գործառնական տնօրեն	ավելի քան 10 տարի
7	Արտակ Խաչատրյան	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի տնօրեն	ավելի քան 23 տարի
8	Արմեն Սարգսյան	Վարչության անդամ, Կազմակերպչական զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների գծով տնօրեն	ավելի քան 23 տարի
9	Հովհաննես Մկրտիչյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ	Ավելի քան 24 տարի

Բանկի աշխատակիցների թիվը 31.12.2018թ. դրությամբ կազմում է 1199:

6) Բանկի պարտավորումների հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն, իսկ տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով/Եվրոյով, իսկ դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով/Եվրոյով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի/Եվրոյի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը 60,000,000.00 (վաթսուն միլիոն) ԱՄՆ դոլար, 6,000,000.00 (վեց միլիոն) եվրո և 4,000,000,000.00 (չորս միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կազմելու է առավելագույնը 600,000 (վեց հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում, 60,000 (վաթսուն հազար) հատ եվրոյով պարտատոմսերի դեպքում և 400,000 (չորս հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմելու է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 (մեկ հարյուր) եվրո և 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջինժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը մինչև հարկերը վճարելը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

7) Արժեթղթերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բանկի անվանական պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է Բանկի Գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման բանկի Վարչության կողմից՝ պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.ardshinbank.am :

8) Բանկի ամփոփ ֆինանսական տվյալներ.

հազ. ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	30.09.2019 (աուդիտ չանցած)	2018 (աուդիտ անցած)	2017 (աուդիտ անցած)	2016 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,332,840	6,471,662	5,528,972	4,111,330 ¹
Սեփական կապիտալի միջին մեծություն	70,662,798	65,937,112	68,961,222	50,986,465
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	15.8% ²	9.8%	8.0%	8.1%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,332,840	6,471,662	5,528,972	4,111,330

¹ Ցուցանիշներից հանված է Առեկսիմբանկի միաձուլման արդյունքում առաջացած էֆեկտը

² Տարեկանացված ցուցանիշներ

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	672,687,917	620,553,831	558,264,440	474,407,761
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	1.7% ³	1.0%	1.0%	0.9%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,332,840	6,471,662	5,528,972	4,111,330
Գործառնական եկամուտ	25,248,499	27,386,038	25,552,852	19,792,683
Զուտ շահույթի մարժա (NPM) %	33.0%	23.6%	21.6%	20.8%
Գործառնական եկամուտ	25,248,499	27,386,038	25,552,852	19,792,683
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	672,687,917	620,553,831	558,264,440	474,407,761
Ակտիվների օգտագործման գործակից % (AU)	5.0% ³	4.4%	4.6%	4.2%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	672,687,917	620,553,831	558,264,440	474,407,761
Սեփական կապիտալի միջին մեծություն	70,662,798	65,937,112	68,961,222	50,986,465
Սեփական կապիտալի մոլտիպլիկատոր (EM)	9.5	9.4	8.1	9.3
Զուտ տոկոսային եկամուտ	17,698,137	19,676,836	17,044,356	14,565,450
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	572,581,624	507,971,289	437,507,421	362,717,767
Զուտ տոկոսային մարժա %(NIM)	4.1% ³	3.9%	3.9%	4.0%
Տոկոսային եկամուտ	43,782,991	50,630,441	46,727,415	44,710,255
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	572,581,624	507,971,289	437,507,421	362,717,767
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	10.2% ³	10.0%	10.7%	12.3%
Տոկոսային ծախսեր	26,084,854	30,953,605	29,683,059	30,144,805
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	597,859,748	552,540,551	487,322,907	412,445,312
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր,	5.8% ³	5.6%	6.1%	7.3%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	8,332,840	6,471,662	5,528,972	4,111,330
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	502,272	502,272	502,272	502,272
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	22.2	12.9	11.0	8.2
ՍՊՐԵԴ,%	4.4%	4.4%	4.6%	5.0%

9) Ամփոփ ֆինանսական գործակիցներ.

³ Տարեկանացված ցուցանիշներ

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

Ծրագրային ազդագրում կատարված փոփոխությունները

1. Փոփոխվել է 3-րդ բաժնի 6.2 կետի տեղեկատվությունը Բանկի խորհրդի կազմի վերաբերյալ, ըստ որի խորհրդի անդամների կազմից դուրս է եկել Գրիգորի Բաբաջանյանը:
2. Ներկայացվել են 3.1.7 կետի հիմնական տնտեսական նորմատիվները 30.09.2019թ. դրությամբ:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծություն	Նորմատիվի փաստացի մեծություն 30.09.2019	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2018	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2017	Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2016
Ն1 (Ընդհանուր կապիտալի և ռոիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 12%	15.32%	13%	13.29%	13.06%
Ն2.1 (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 15%	23.64%	18.75%	28.28%	26.28%
Ն2.2 (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն)	Նվազագույնը 60%	141.07%	106.06%	131.26%	176.44%
Ն3.1 (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը)	Առավելագույնը 20%	14.67%	17.86%	19.59%	17.10%
Ն3.2 (խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը)	Առավելագույնը 500%	257.55%	350.02%	292.54%	302.24%
Ն4.1 (բանկի հեք)	Առավելագույնը	3.30%	3.85%	2.24%	4.87%

կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը)	5%				
--	----	--	--	--	--

3. Ներկայացվել են 3-րդ բաժնի 7-րդ կետի Ֆինանսական վիճակի էական փոփոխությունները 30.09.2019թ. դրությամբ:

Ցուցանիշ	Բացարձակ մեծություն 30.09.19թ. դրությամբ (միլիարդ ՀՀ դրամ)	Աճը %-ային հարաբերակցությամբ
Ակտիվներ	672.4	-0.1%
Վարկային պորտֆել	445.1	-2.6%
Հաճախորդների միջոցներ	379.5	3.2%

4. Թարմացվել է Հավելված 6-ը՝ ներառվել են 2019թ. երեք եռամսյակների (չստուգված) Ֆինանսական հաշվետվությունները:

«Արդշինքանկ» ՓԲԸ

Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ

***2019թ սեպտեմբերի 30-ին ավարտված
ժամանակաշրջանի համար***

Բովանդակություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

	Ծնթգ.	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ (չստուգված)	01.01.2019թ. - 30.09.2019թ. հազ. դրամ (չստուգված)	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ (չստուգված)	01.01.2018թ. - 30.09.2018թ. հազ. դրամ (չստուգված)
Տոկոսային եկամուտ	4	15,005,784	43,782,991	12,788,378	36,085,614
Տոկոսային ծախս	4	(8,704,907)	(26,084,854)	(8,159,486)	(22,442,441)
Զուտ տոկոսային եկամուտ		6,300,877	17,698,137	4,628,892	13,643,173
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	5	1,527,315	4,138,347	1,090,871	3,290,508
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(560,809)	(1,392,199)	(466,660)	(1,159,411)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		966,506	2,746,148	624,211	2,131,097
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող վարկերից		78,245	234,358	-	-
Զուտ օգուտ (վնաս) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		2,497,261	3,139,874	(204,795)	(202,359)
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	6	(1,414,744)	(260,984)	745,211	1,640,341
Զուտ օգուտ (վնաս) ներդրումային արժեքդրերից		505,873	662,936	57,724	1,315,251
Այլ գործառնական եկամուտ		532,491	1,028,030	213,862	699,185
Գործառնական եկամուտ		9,466,509	25,248,499	6,065,106	19,226,688
Արժեզրկումից կորուստներ	7	(2,596,154)	(6,031,635)	(1,855,377)	(5,073,170)
Աշխատակազմի գծով ծախսեր		(1,485,705)	(4,513,263)	(1,220,846)	(3,724,235)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,486,139)	(4,284,217)	(1,532,814)	(4,485,436)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		3,898,511	10,419,383	1,456,069	5,943,847
Շահութահարկի գծով ծախս	9	(797,366)	(2,086,543)	(279,733)	(1,197,306)
Շահույթ ժամանակաշրջանի համար		3,101,145	8,332,840	1,176,336	4,746,541
Այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի					
<i>Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ					
- Իրական արժեքի զուտ փոփոխություն		117,598	272,162	3,621	149,478
- Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		54,480	(17,296)	(22,531)	(554,287)
<i>Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>		172,078	254,866	(18,911)	(404,808)
Այլ համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի		172,078	254,866	(18,911)	(404,808)
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար		3,273,223	8,587,706	1,157,425	4,341,733

Անաեյան Արտակ
Վարչության նախագահ

Հաստատված է 10.10.2019թ.
www.ardshinbank.am




Մկրտիչյան Հովհաննես
Գլխավոր հաշվապահ



		30.09.2019թ. հազ. դրամ (չստուգված)	31.12.2018թ. հազ. դրամ (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	105,135,663	114,466,574
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	11		
- Բանկի կողմից պահվող		8,862,725	1,150,588
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		5,507,585	4,068,963
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր ու փոխառություններ	12	35,996,140	31,157,004
Հաճախորդներին տրված վարկեր	13	445,067,206	456,757,927
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	14		
- Բանկի կողմից պահվող		18,376,840	5,291,343
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		25,852,319	31,252,963
Բռնագանձված գույք		6,707,334	10,258,745
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15	14,345,066	12,484,911
Ընթացիկ հարկային ակտիվ		655,956	34,434
Հետաձգված հարկային ակտիվներ		2,109,124	3,304,293
Այլ ակտիվներ	16	3,771,122	2,761,008
Ընդամենը ակտիվներ		672,387,080	672,988,753
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ	17	185,604,250	196,903,166
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	25,394,722	41,174,485
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	379,460,491	367,182,381
Ընթացիկ հարկային պարտավորություններ		955,090	-
Այլ պարտավորություններ	20	5,066,288	2,309,365
Ընդամենը պարտավորություններ		596,480,841	607,569,397
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	21	52,227,200	50,227,200
Էմիսիոն եկամուտ		51	51
Հողի և շենքերի վերագնահատումից աճ		5,024,679	5,024,679
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		313,447	58,581
Գլխավոր պահուստ		2,743,542	2,419,959
Զբաղիված շահույթ		15,597,320	7,688,886
Ընդամենը սեփական կապիտալ		75,906,239	65,419,356
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		672,387,080	672,988,753

Անանյան Արտակ
 Վարչության նախագահ



Մկրտիչյան Հովհաննես
 Գլխավոր հաշվապահ

Հաստատված է 10.10.2019թ.

	30.09.2019թ. հազ. դրամ (չստուգված)	30.09.2018թ. հազ. դրամ (չստուգված)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	46,026,256	35,003,747
Վճարված տոկոսներ	(25,603,470)	(21,613,895)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	4,138,347	3,290,508
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(1,392,199)	(1,159,411)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	5,462,598	1,439,710
Զուտ մուտքեր ֆինանսական ակտիվներից	662,936	1,315,251
Այլ ստացված եկամուտ	1,028,030	699,185
Այլ ընդհանուր վարչական և աշխատակազմի ծախսերի գծով վճարումներ	(7,023,788)	(4,226,548)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր ու փոխառություններ	(5,031,544)	(75,460)
Հաճախորդներին տրված վարկեր	1,101,426	(70,373,535)
Այլ ակտիվներ	(1,204,796)	(359,579)
Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)		
Բանկերի կարճաժամկետ ավանդներ և մնացորդներ	8,050,438	(15,555,423)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(13,529,321)	8,827,634
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	14,593,630	30,449,420
Այլ պարտավորություններ	9,383	34,637
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	27,287,926	(32,303,759)
Վճարված շահութահարկ	(662,692)	(1,209,933)
Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	26,625,234	(33,513,692)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ներդրումային արժեթղթեր	(16,874,453)	247,902
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(637,302)	(384,433)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(17,511,755)	(136,531)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,000,000	-
Վճարված շահաբաժիններ	(58,945)	-
Փոխառությունների ստացում	94,362,059	143,632,678
Փոխառությունների մարում	(98,832,739)	(57,765,974)
Թողարկված պարտքային արժեթղթերի վաճառք	6,475,919	192,606
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(20,341,196)	(2,425,800)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	(16,394,902)	83,633,510
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(7,281,423)	49,983,287
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,049,488)	217,236
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	114,466,574	81,279,983
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	105,135,663	131,480,506

Անանյան Արտակ
Վարչության նախագահ

Հաստատված է 10.10.2019թ.



Մկրտիչյան Հովհաննես
Գլխավոր հաշվապահ



«Արդշինբանկ» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	Բաժնետիրակ. կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հողի և շենքերի վերագնահա- տումից աճ	Ներդրումային արժեքների վերագնահատմ. պահուստ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	50,227,200	51	5,160,623	789,857	2,143,510	8,133,627	66,454,868
Ընդամենը համապարփակ եկամուտ							
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-		4,746,541	4,746,541
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցություն առ 1 հունվար 2018թ.	-	-	-	-		(1,756,704)	(1,756,704)
Այլ համապարփակ եկամուտ							
Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	149,478	-	-	149,478
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(554,287)	-	-	(554,287)
Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	(404,808)	-	-	(404,808)
Հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Փոխանցում վերագնահատման պահուստներից դեպի շահույթ շահույթ			(135,944)			135,944	-
Ընդամենը հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	(135,944)	(404,808)	-	135,944	(404,808)
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար	-	-	(135,944)	(404,808)	-	3,125,782	2,585,029
Գործառնություններ Բանկի սեփականատերերի հետ							
Սովորական բաժնետոմսերի թողարկում	-	-	-	-	-	-	-
Հայտարարված և վճարված շահաբաժիններ						-	-
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	-	-
Վերադասակարգում համաձայն ՖՀՄՍ 9-ի				(217,329)			(217,329)
Մնացորդը առ 30 սեպտեմբեր 2018թ.	50,227,200	51	5,024,679	167,720	2,143,510	11,259,409	68,822,569

Անանյան Արտակ
Վարչության նախագահ
Հաստատված է 10.10.2019թ.



Մկրտիչյան Հովհաննես
Գլխավոր հաշվապահ



«Արդշինբանկ» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	Բաժնետիրակ. կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Հողի և շենքերի վերագնահա- տումից աճ	Ներդրումային արժեքների վերագնահատմ. պահուստ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ. (ստուգված)	50,227,200	51	5,024,679	58,581	2,419,959	7,688,886	65,419,356
Ընդամենը համապարփակ եկամուտ							
Շահույթ ժամանակաշրջանի համար						8,332,840	8,332,840
Հատկացում գլխավոր պահուստին					323,583	(323,583)	-
Այլ համապարփակ եկամուտ							
Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի				272,162			272,162
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի				(17,296)			(17,296)
Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս				254,866			254,866
Հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Փոխացում վերագնահատման պահուստներից դեպի չբաշխված շահույթ							
Ընդամենը հողվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս							
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ				254,866			254,866
Ընդամենը համապարփակ եկամուտ ժամանակաշրջանի համար				254,866	323,583	8,009,257	8,587,706
Գործառնություններ Բանկի սեփականատերերի հետ							
Սովորական բաժնետոմսերի թողարկում							
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	2,000,000						2,000,000
Հայտարարված շահաբաժիններ						(100,822)	(100,822)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	2,000,000					(100,822)	1,899,178
Մնացորդը առ 30 սեպտեմբեր 2019թ. (չստուգված)	52,227,200	51	5,024,679	313,447	2,743,542	15,597,321	75,906,240

Անանյան Արտակ
Վարչության նախագահ
Հաստատված է. 10.10.2019թ.



Մկրտիչյան Հովհաննես
Գլխավոր հաշվապահ

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն («Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն 2003թ-ին: Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկային գործառնությունների իրականացումը, երաշխավորությունների տրամադրումը, վճարահաշվարկային գործառնությունների, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների հատուցումը երաշխավորող պետական համակարգի անդամ:

Բանկն ունի 64 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 13 և 13/1: Բանկի աշխատողների միջին քանակը 2019թ. երրորդ եռամսյակի դրությամբ 1,221 է (2017թ. երկրորդ եռամսյակ՝ 1,127):

Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկի մայր կազմակերպությունն է «Արինս Գրուպ» ՍՊԸ-ն (նախկինում «Բիզնես ներդրումների կենտրոն» ՍՊԸ-ն): Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Կարեն Սաֆարյանը, ով մասնակցություններ ունի Բանկի հետ չառնչվող այլ կազմակերպություններում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Բանկի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով ու վերագնահատված արժեքով հաշվառվող հոդի և շենքերի:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Բանկի և վերջինիս դուստր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Բանկի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Էական անորոշ գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- վարկերի արժեզրկման գնահատում – ծանոթագրություն 13,
- բռնագանձված ակտիվների արժեզրկման գնահատում – ծանոթագրություն 13,
- շենքերի վերագնահատում – ծանոթագրություն 15

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

(ա) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերություն ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված արտարժույթային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): ՀՀ ԿԲ-ում պահվող պարտադիր պահուստային ավանդը չի համարվում դրամական միջոցների համարժեք, քանի որ դրանից միջոցների ելքագրումը սահմանափակված է: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում ենք ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը գործում է 2018թ. հունվարի 1-ից:

Այն փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը:

Բանկը կիրառել է նոր ստանդարտը 2018թ. հունվարի 1-ից

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները ճանաչվել են չբաշխված շահույթի և պահուստների կազմում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Դասակարգում – Ֆինանսական ակտիվներ

ՖՀՄՍ 9-ը նախատեսում է նոր մոտեցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար, որն արտացոլում է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում կառավարվում են ակտիվները և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի բնութագրերը: ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝

ա) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,

բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,

գ) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ստանդարտի համաձայն՝ ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերն այլևս չեն գործում: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասվում է նշված դասերից որևէ մեկին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նաշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և
- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Դասակարգում – Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ

- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Առևտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գուտ հաշվեկշռային արժեքին:

(i) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Բանկը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույնն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում մնանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Բանկը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

(vi) Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը: Եթե Բանկը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում:

Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(vii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեյո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեյո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «բանկերի ավանդներ և մնացորդներ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեյո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեյո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «բանկերին տրված վարկեր» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեյո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(vii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Բանկն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Բանկն ունի հաշվանցում կատարելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, եթե այդ իրավունքը կախված չէ ապագա դեպքերից և իրագործելի է թե՛ բնականոն գործունեության և թե՛ Բանկի ու բոլոր պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, վերջիններիս լուծարման կամ սնանկացման դեպքում:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Շենքերը ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հողի և շենքերի իրական արժեքների շարժից: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ շենքի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- | | |
|---------------------------------|--|
| – շենքեր | 15-ից 50 տարի |
| – սարքավորումներ | 5-ից 7 տարի |
| – տնտեսական գույք | 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 5 տարի |
| – վարձակալված գույքի բարելավում | օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնը |

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կան վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

(զ) Բռնագանձված գույք

Բռնագանձված գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

(է) Արժեզրկում – Ֆինանսական ակտիվներ, վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով, որի համար պահանջվում են էական դատողություններ այն մասին, թե ինչպիսի ազդեցություն կունենան տնտեսական գործոնները սպասվող պարտքային վնասի վրա, որը կորոշվի հավանականության հիմունքով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով ստացվելիք գումարների, որոշ վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի նկատմամբ: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ արժեզրկման գծով պահուստը ճանաչվում է կամ հաջորդ 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին կամ ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար չափով: Ֆինանսական գործիքի գործողության ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ողջ ժամկետի ընթացքում, մինչդեռ 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի գծով ճանաչվող սպասվող պարտքային վնասի սկզբնական գումարը հավասար է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին (բացառությամբ որոշ առևտրական դեբիտորական պարտքերի և վարձակալության գծով ստացվելիք գումարների, պայմանագրային ակտիվների, կամ ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվների): Եթե ֆինանսական գործիքի գծով վարկային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչման պահից, վնասի գծով պահուստը չափվում է գործիքի ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար չափով:

Ֆինանսական ակտիվները, որոնց գծով ճանաչվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս, դիտարկվում են որպես 1-ին փուլի ակտիվներ, ֆինանսական ակտիվները, որոնց գծով վարկային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչման պահից, սակայն չի գրանցվել պարտավորությունների չկատարման դեպք, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ակտիվներ և ֆինանսական ակտիվները, որոնց գծով պարտավորությունները չեն կատարվել կամ գրանցվել է այլ հանգամանքներով պայմանավորված արժեզրկում, դիտարկվում են որպես 3-րդ փուլի ակտիվներ:

Սպասվող պարտքային վնասի չափումը պետք է լինի ակնողմնակալ և հիմնված լինի հավանականության գործոնի վրա, պետք է արտացոլի փողի ժամանակային արժեքը և ներառի ողջամիտ ու հիմնավորված տեղեկատվություն նախկինում տեղի ունեցած դեպքերի, ընթացիկ պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների վերաբերյալ, որը հասանելի է առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասը ճանաչվում է ավելի վաղ, քան դա պահանջվում է ՀՀՄՍ 39-ով, որի արդյունքում մեծանում է շահույթի կամ վնասի փոփոխականությունը: Դա կարող է հանգեցնել նաև արժեզրկման գծով պահուստի աճին, քանի որ բոլոր ֆինանսական ակտիվները կգնահատվեն առնվազն 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասի տեսանկյունից, և ֆինանսական ակտիվների խումբը, որի համար կիրառելի կլինի գործիքի ողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասը, հավանաբար ավելի մեծ կլինի այն խմբից, որի համար առկա կլինի արժեզրկման անկողմնակալ վկայություն՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի:

Սպասվող պարտքային վնասի հաշվարկի համար կիրառվում է պարտավորությունների չկատարման հավանականություն x պարտավորությունների չկատարման արդյունքում առաջացող վնաս x պարտքի գումարը պարտավորությունների չկատարման պահին ($PD \times LGD \times EAD$) մոտեցումը (առնվազն որոշ պորտֆելների համար)՝ կախված ֆինանսական ակտիվի տեսակից, ֆինանսական ակտիվի դասակարգման փուլից՝ ըստ ՖՀՄՄ 9-ի դասակարգման, առանձին կամ հավաքական հիմունքով գնահատումից և այլ գործոններից:

(ը) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(թ) Վարկային պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտապանն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորությունների գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ճանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում: Վարկային պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Բանկը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- եթե Բանկն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկային պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել գուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(ii) Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող գումարը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

(iii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(Ի) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Ընթացիկ հարկի գծով վճարվելիք գումարները ներառում են նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակների հետ չնվազեցվող գույքի, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ժամանակավոր տարբերություններ, որոնք վերաբերում են այն դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպությունում և համատեղ ձեռնարկություններում կատարված ներդրումներին, որտեղ մայր կազմակերպությունը հնարավորություն ունի վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձման ժամկետները և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Բանկն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Բանկը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկի գծով համապատասխան օգուտը կարող է իրացվել:

Ընթացիկ և հետաձգված հարկի գումարը որոշելիս՝ Բանկը հաշվի է առնում անորոշ հարկային դիրքերի ազդեցությունը: Բանկը գտնում է, որ հարկային պարտավորությունների գծով հաշվեգրումները բավարար են բոլոր չստուգված հարկային տարիների համար, հիմք ընդունելով բազմաթիվ գործոնների իր գնահատականը, այդ թվում՝ հարկային օրենսդրության մեկնաբանությունները և նախկին տարիների փորձը: Այս գնահատականը հիմնված է գնահատումների և ենթադրությունների վրա և կարող է ներառել մի շարք դատողություններ ապագա իրադարձությունների վերաբերյալ: Կարող է ի հայտ գալ նոր տեղեկատվություն, որից ելնելով Բանկը կարող է փոխել իր դիրքորոշումը գոյություն ունեցող հարկային պարտավորությունների բավարար լինելու մասին: Հարկային պարտավորությունների նման փոփոխություններն ազդեցություն կունենան հարկային ծախսերի վրա այն ժամանակաշրջանում, որում կատարվել է նման գնահատումը:

(1) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(Խ) Սեզոնային հաշվետվություններ

Գործառնական սեզոնային Բանկը բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ նույն Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը), որի գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեզոնային միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և վերջինիս գործունեության արդյունքները գնահատելու նպատակով, և որի համար առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Բանկը մտադիր է կիրառել այդ ստանդարտները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- 2017թ. հոկտեմբերին ՀՀՍՄԽ-ն հրապարակել է «Վաղաժամկետ մարման պայման *բացասական հատուցմամբ*» (*ՖՀՄՄ 9-ի փոփոխություններ*): Փոփոխությունները գործում են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող են կիրառվել ժամանակից շուտ

4 Չուտ տոկոսային եկամուտ

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ				
Հաճախորդներին տրված վարկեր	13,187,204	39,004,283	11,890,228	33,155,796
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	200,903	502,628	40,448	626,956
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	969,309	2,611,622	573,446	1,153,757
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր ու փոխատվություններ	609,393	1,558,241	255,592	1,062,544
Այլ	38,975	106,217	28,664	86,561
	15,005,784	43,782,991	12,788,378	36,085,614
Տոկոսային ծախս				
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,833,816	13,667,292	4,092,715	11,612,003
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	2,983,352	9,239,074	2,477,537	6,068,239
Թողարկված պարտքային արժեթղթեր	857,736	3,086,664	1,589,234	4,762,199
Տոկոսային ծախս վարձակալությունից (ՖՀՄՍ 16)	30,003	91,824	-	-
	8,704,907	26,084,854	8,159,486	22,442,441

5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ
Դրամական միջոցների կանխիկացում	606,554	1,407,711	286,936	933,263
Դրամային փոխանցումներ	395,912	1,137,358	257,188	749,256
Պլաստիկ քարտերի սպասարկում	234,786	662,513	343,889	982,659
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	221,408	738,218	176,822	493,021
Այլ	68,655	192,547	26,036	132,308
	1,527,315	4,138,347	1,090,871	3,290,508

6 Ջուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ
Օգուտ սփոթ գործարքներից	913,247	2,322,724	496,314	1,642,069
Օգուտ (վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(2,327,991)	(2,583,709)	248,897	(1,728)
	(1,414,744)	(260,984)	745,211	1,640,341

7 Արժեզրկումից կորուստներ

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	2,581,081	7,016,945
Այլ ֆինանսական ակտիվներ	28,928	249,403
Ոչ ֆինանսական ակտիվներ	(13,856)	-
	2,596,154	6,031,635

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի արժեզրկման գծով պահուստի շարժը 2019թ. սեպտեմբերի 30-ին և 2018թ. սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանի համար:

01.07.2019-30.09.2019

	Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,356,635	7,316,687	11,673,322
Ջուտ ծախս	1,066,170	1,514,913	2,581,083
Վերականգնում (դուրսգրում)	(220,117)	(457,358)	(677,475)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	5,202,688	8,374,242	13,576,930

01.01.2019-30.09.2019

	Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	5,666,231	5,630,152	11,296,383
Ջուտ ծախս	2,681,889	4,335,058	7,016,947
Վերականգնում (դուրսգրում)	(3,145,432)	(1,590,968)	(4,736,400)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	5,202,688	8,374,242	13,576,930

01.07.2018-30.09.2018

	Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,654,302	3,653,971	8,308,273
Զուտ ծախս	733,211	1,122,166	1,855,377
Վերականգնում (դուրսգրում)	(97,265)	(84,898)	(182,163)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	5,290,248	4,691,239	9,981,487

01.01.2018-30.09.2018

	Իրավաբանական անձանց տրված վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	3,117,334	1,910,753	5,028,087
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցություն	1,442,395	753,485	2,195,880
Զուտ ծախս	1,737,471	3,335,700	5,073,170
Վերականգնում (դուրսգրում)	(1,006,951)	(1,308,698)	(2,315,650)
Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ	5,290,248	4,691,239	9,981,487

8 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	354,055	1,055,456	87,578	593,185
Գործառնական վարձակալության գծով ծախս	51,266	57,111	224,300	546,234
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	68,697	183,444	67,855	147,753
Գովազդի, շուկայավարման և գործակալական ծախսեր	85,270	275,387	121,404	398,485
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ	123,071	411,642	115,928	305,980
Անվտանգության ծառայություն	90,132	275,682	87,439	261,562
Վարկերի հավաքագրման և տրամադրման ծախսեր	69,738	195,939	49,315	287,142
Կապի և տեղեկատվական ծառայություններ	93,915	277,979	83,422	242,083
Վերանորոգման և պահպանման ծախսեր	67,184	195,016	53,596	166,028
Ծրագրային ապահովման ծախսեր	86,310	231,269	65,467	180,688
Կոմունալ և գրասենյակի պահպանման ծախսեր	39,538	110,671	35,471	104,413
Ապահովագրություն	84,888	253,049	44,898	137,145
Կանխիկի փոխադրման ծախսեր	32,444	100,026	33,199	99,769
Մասնագիտական ծառայություններ	34,776	85,189	19,725	68,897
Գործուղման ծախսեր	31,214	70,447	15,167	49,295
Գրասենյակային ծախսեր	20,873	72,034	17,977	54,371
Բարեգործություն և հովանավորություն	23,678	96,545	1,640	152,293
Այլ	129,090	337,330	408,433	690,112
	1,486,139	4,284,217	1,532,814	4,485,436

9 Շահութահարկի գծով ծախս

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ
Շահութահարկի գծով ծախս	(283,917)	(955,090)	(42,336)	(578,830)
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման արդյունքում	(513,449)	(1,131,453)	(237,397)	(618,476)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	(797,366)	(2,086,543)	(279,733)	(1,197,306)

2019թ. 3-րդ եռամսյակի ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2018թ. 3-րդ եռամսյակում՝ 20%):

Գործող հարկային դրույքի համադրում սեպտեմբերի 30-ին ավարտված ժամանակաշրջանների համար

	01.07.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	%	01.01.2019թ.- 30.09.2019թ. հազ. դրամ	%	01.07.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	%	01.01.2018թ.- 30.09.2018թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան հարկումը	3,898,511		10,419,383		1,456,069		5,943,847	
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	(779,702)	(20.0)	(2,083,877)	(20.0)	(291,214)	(20.0)	(1,188,769)	(20.0)
Չհարկվող եկամուտ (չնվազեցվող ծախսեր)	(17,664)	0.5	(2,666)	-	11,481	0.8	(8,537)	(0.1)
	(797,366)	(20.5)	(2,086,543)	(20.0)	(279,733)	(19.2)	(1,197,306)	(20.1)

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ) 2019թ. և 2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն: Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2019թ. և 2018թ. սեպտեմբերի 30-ի ավարտված ժամանակահատվածների ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հուլիսի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյուքնում ճանաչված	Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2019թ.
Ներդրումային արժեքդրեր	(21,541)	2,744	(43,019)	(61,816)
Հաճախորդներին տրված վարկեր	3,053,210	(380,061)		2,673,149
Հիմնական միջոցներ	(1,295,431)	(9,139)		(1,304,570)
Բանկերում տեղաքաշխված միջոցներ	357,815	(844)		356,971
Բռնագանձված գույք	840,956	(2,871)		838,085
Այլ ակտիվներ	(283,780)	(118,780)		(402,560)
Այլ պարտավորություններ	14,363	(4,498)		9,865
	2,665,592	(513,449)	(43,019)	2,109,124

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյուքնում ճանաչված	Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2019թ.
Ներդրումային արժեքդրեր	5,519	(3,619)	(63,716)	(61,816)
Հաճախորդներին տրված վարկեր	3,182,823	(509,674)	-	2,673,149
Հիմնական միջոցներ	(1,279,573)	(24,996)	-	(1,304,570)
Բանկերում տեղաքաշխված միջոցներ	347,437	9,534	-	356,971
Բռնագանձված գույք	1,128,783	(290,698)		838,085
Այլ ակտիվներ	(93,870)	(308,690)	-	(402,560)
Այլ պարտավորություններ	13,174	(3,310)	-	9,865
	3,304,293	(1,131,453)	(63,716)	2,109,124

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հուլիսի 2018թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2018թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	(46,658)	93,105	(88,377)	(41,930)
Հաճախորդներին տրված վարկեր	2,406,068	(241,319)	-	2,164,749
Հիմնական միջոցներ	(1,382,665)	(33,923)	-	(1,416,588)
Բանկերում տեղաքաշխված միջոցներ	28,982	-	-	28,982
Բռնագանձված գույք	1,141,462	(2,553)	-	1,138,909
Այլ ակտիվներ	(20,068)	-	-	(20,068)
Այլ պարտավորություններ	155,353	(52,708)	-	102,645
	2,282,473	(237,397)	(88,377)	1,956,699

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցություն	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2018թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	(230,200)	21,331	129,569	37,370	(41,930)
Հաճախորդներին տրված վարկեր	2,510,078	385,114	(730,443)	-	2,164,749
Հիմնական միջոցներ	(1,298,394)	-	(118,194)	-	(1,416,588)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	23,802	5,180	-	-	28,982
Բռնագանձված գույք	1,143,022	-	(4,113)	-	1,138,909
Այլ ակտիվներ	(47,619)	27,551	-	-	(20,068)
Այլ պարտավորություններ	(2,060)	-	104,705	-	102,645
	2,098,629	439,176	(618,476)	37,370	1,956,699

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող
հարկային հետևանքները 2019թ. սեպտեմբերի 30-ին:

հազ. դրամ	01.07.2019 -30.09.2019թ.			01.01.2019 -30.09.2019թ.		
	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	301,561	(29,400)	272,162	340,202	(68,040)	272,162
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	(3,676)	(13,620)	(17,296)	(21,619)	4,324	(17,295)
Այլ համապարփակ եկամուտ	297,885	(43,019)	254,866	318,582	(63,716)	254,866

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	13,701,550	13,582,219
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	59,643,583	79,190,454
Ավանդ ՀՀ ԿԲ-ում	-	5,502,711
Ավանդներ բանկերում	-	-
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- Ա- -ից Ա+ վարկանիշով	26,169,545	15,678,131
- ԲԲԲ վարկանիշով	5,650,427	556,015
- ԲԲ- -ից to ԲԲ+ վարկանիշով	1,443	3,995
- Բ- -ից Բ+ վարկանիշով	39	2,271
- առանց վարկանիշի	68,557	1,445
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	31,890,011	16,241,857
հնարավոր կորուստների պահուստ	(99,481)	(50,667)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	105,135,663	114,466,574

Նոստրո հաշիվները ներառում են ոչ տոկոսակիր պարտադիր նվազագույն պահուստը, որը հաշվարկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կանոնակարգերի համաձայն: Այս պահուստների ելքագրումը սահմանափակված չէ:

Վարկերի որակական ցուցանիշները բացահայտելիս՝ Բանկն օգտագործում է Standard&Poor's վարկանիշային գործակալության վարկանիշները:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը միայն մեկ բանկում ունի (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մեկ բանկում) տեղաբաշխված միջոցներ, բացառությամբ ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցների, որի մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը կազմում է 18,735,487 հազար դրամ):

11 Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	8,672,741	961,404
Կորպորատիվ պարտատոմսեր	-	-
Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	8,672,741	961,404
Բաժնային ներդրումներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	189,984	189,184
	8,862,725	1,150,588
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	5,507,585	4,068,963
Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	5,507,585	4,068,963

Բանկն իրականացնում է արժեթղթերի վաճառքի գործարքներ հետգնման պայմանագրերի շրջանակներում և արժեթղթերի ձեռքբերման գործարքներ՝ վերավաճառքի պայմանագրերի շրջանակներում:

Հետգնման պայմանագրերի շրջանակներում վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, և Բանկը ստանում է դրամական միջոցներ դրանց դիմաց: Պայմանագրային կողմերը կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել այս ֆինանսական ակտիվները, եթե նույնիսկ Բանկը կատարում է իր բոլոր պարտականությունները, սակայն պայմանագրային կողմը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի գործողության ավարտին: Բանկը որոշել է, որ պահպանում է այս արժեթղթերի հետ կապված բոլոր ռիսկերը և հատույցները, այդ իսկ պատճառով, չի ապաճանաչել դրանք: Ստացված դրամական միջոցները ճանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ գրավի ձեռքբերման գինը մարելու պարտականության գծով ճանաչվում է ֆինանսական պարտավորություն և ներառվում է «Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ» հոդվածի կազմում (ծանոթագրություն 17):

Այս գործարքներն իրականացվում են վարկավորման, արժեթղթերի որպես փոխառություն ստանալու և տրամադրելու ստանդարտ գործառնությունների համար բնորոշ պայմաններով:

12 Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Հակադարձ հետգնման պայմանագրեր միջին չափի հայկական ֆինանսական կազմակերպությունների հետ	22,972,714	17,229,492
Հակադարձ հետգնման պայմանագրեր ոչ ռեզիդենտ բանկերի հետ	-	1,898,065
Հակադարձ հետգնման պայմանագրեր ֆիզիկական անձանց հետ	-	-
Երաշխիքների դիմաց գրավադրված միջոցներ ոչ ռեզիդենտ բանկում	10,486,088	9,684,000
Վարկային քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում	337,000	635,500
Այլ ստացվելիք գումարներ բանկերից	1,175,622	1,263,568
Այլ	1,024,715	446,379
	35,996,139	31,157,004

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերը և փոխառություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն, բացառությամբ ռեզիդենտ բանկից ստացվելիք գումարի, որի գումարը 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմում է 911,518 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 934,827 հազար դրամ):

Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերի և փոխատվությունների կենտրոնացում

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկը ունի մեկ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք) ֆինանսական կազմակերպությանը տրամադրած միջոցներ, որի մնացորդը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը կազմում է 10,423,743 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,892,741 հազար դրամ):

Ակտիվների համար որպես ապահովություն ընդունված գրավ

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվների (ՀՀ պետական արժեթղթեր) իրական արժեքը կազմում է 25,567,644 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ է 20,436,034 հազար դրամ): Բանկն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել հակադարձ հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված ֆինանսական ակտիվները:

Այս գործարքներն իրականացվում են վարկավորման, արժեթղթերի որպես փոխատվություն ստանալու և տրամադրելու ստանդարտ գործառնությունների համար բնորոշ պայմաններով:

13 Հաճախորդներին տրված վարկեր

Ամորտիզացված արժեքով չափվող վարկեր	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր	266,398,439	307,884,476
Անհատներին տրված վարկեր		
Ոսկու գրավադրմամբ վարկեր	45,592,889	35,182,967
Վարկային քարտեր	43,685,524	46,570,236
Հիփոթեքային վարկեր	43,171,029	34,906,097
Սպառողական և այլ վարկեր	42,357,688	26,053,628
Ընդամենը անհատներին տրված վարկեր	174,807,130	142,712,928
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	441,205,569	450,597,404
Արժեզրկման գծով պահուստ	(13,576,930)	(11,296,383)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	427,628,639	439,301,021
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող վարկեր		
Իրավաբանական անձանց տրված վարկեր	17,438,567	17,456,906
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր՝ ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող	445,067,206	456,757,927

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

30.09.2019թ.						
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր						
- ոչ ժամկետանց	241,260,137	4,162,354	1,187,707	7,250,260	16,922,721	270,783,179
- 1-90 օր ժամկետանց	854,796	7,721,459	65,431	-	-	8,641,686
- 91-180 օր ժամկետանց	-	-	1,183,751	-	-	1,183,751
- 181-270 օր ժամկետանց	-	-	43,281	-	85,899	129,180
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	1,393,372	1,275,891	429,948	3,099,211
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	242,114,933	11,883,813	3,873,542	8,526,151	17,438,567	283,837,006
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(1,430,713)	(1,996,386)	(1,775,589)	-	-	(5,202,688)
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	240,684,221	9,887,427	2,097,953	8,526,151	17,438,567	278,634,318
Անհատներին տրված վարկեր						
Ոսկու գրավադրմամբ վարկեր						
- ոչ ժամկետանց	39,824,630	2,400,410	-	-	-	42,225,040
- մինչև 30 օր ժամկետանց	879,425	282,875	-	-	-	1,162,300
- 30-89 օր ժամկետանց	-	787,574	4,139	-	-	791,714
- 90-179 օր ժամկետանց	-	-	671,873	-	-	671,873
- 180-270 օր ժամկետանց	-	-	198,768	-	-	198,768
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	543,193	-	-	543,193
Ընդամենը համախառն ոսկու գրավադրմամբ վարկեր	40,704,055	3,470,860	1,417,974	-	-	45,592,889
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(486,036)	(219,658)	(507,610)	-	-	(1,213,304)
Ընդամենը զուտ ոսկու գրավադրմամբ վարկեր	40,218,019	3,251,201	910,364	-	-	44,379,585

30.09.2019թ.						
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Չեռերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Վարկային քարտեր						
- ոչ ժամկետանց	36,078,387	1,024,332	-	305,039	-	37,407,758
- մինչև 30 օր ժամկետանց	963,552	188,203	-	-	-	1,151,755
- 30-89 օր ժամկետանց	-	1,001,625	3,947	-	-	1,005,572
- 90-179 օր ժամկետանց	-	-	1,254,821	-	-	1,254,821
- 180-270 օր ժամկետանց	-	-	1,476,119	-	-	1,476,119
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	1,389,498	-	-	1,389,498
Ընդամենը համախառն վարկային քարտեր	37,041,939	2,214,161	4,124,385	305,039	-	43,685,524
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(1,404,154)	(583,092)	(1,804,081)			(3,791,327)
Ընդամենը զուտ վարկային քարտեր	35,637,786	1,631,069	2,320,304	305,039	-	39,894,197
Հիփոթեքային վարկեր						
- ոչ ժամկետանց	41,041,325	440,020	-	-	-	41,481,345
- մինչև 30 օր ժամկետանց	401,029	91,579	-	-	-	492,608
- 30-89 օր ժամկետանց	-	240,777	-	-	-	240,777
- 90-179 օր ժամկետանց	-	-	215,589	-	-	215,589
- 180-270 օր ժամկետանց	-	-	145,854	-	-	145,854
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	594,857	-	-	594,857
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	41,442,355	772,375	956,299		-	43,171,029
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(50,063)	(15,373)	(28,932)			(94,368)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	41,392,292	757,002	927,367	-	-	43,076,662
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ վարկեր						
- ոչ ժամկետանց	35,879,728	1,036,578	-	21,137	-	36,937,443
- մինչև 30 օր ժամկետանց	1,074,185	223,140	-	-	-	1,297,325
- 30-89 օր ժամկետանց	-	1,189,919	5,732	-	-	1,195,651
- 90-179 օր ժամկետանց	-	-	1,364,538	-	-	1,364,538
- 180-270 օր ժամկետանց	-	-	1,015,771	-	-	1,015,771
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	546,960	-	-	546,960
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ համախառն վարկեր	36,953,914	2,449,636	2,933,001	21,137	-	42,357,688
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(1,254,040)	(582,259)	(1,438,944)		-	(3,275,243)
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ զուտ վարկեր	35,699,874	1,867,377	1,494,057	21,137	-	39,082,445
Ընդամենը անհատներին տրված համախառն վարկեր	156,142,263	8,907,032	9,431,659	326,176		174,807,130
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(3,194,292)	(1,400,383)	(3,779,566)	-	-	(8,374,242)

30.09.2019թ.						
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ընդամենը անհատներին տրված զուտ վարկեր	152,947,971	7,506,649	5,652,093	326,176	-	166,432,889
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	398,257,196	20,790,845	13,305,201	8,852,327	17,438,567	458,644,136
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(4,625,005)	(3,396,769)	(5,555,155)	-	-	(13,576,930)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	393,632,191	17,394,076	7,750,046	8,852,327	17,438,567	445,067,206

2018թ.**						
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Ձեռքբերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Իրավաբանական անձանց տրված վարկեր						
- ոչ ժամկետանց	287,106,341	5,609,108	1,093,025	9,560,618	16,985,062	320,354,154
- մինչև 30 օր ժամկետանց	188,726	-	-	-	-	188,726
- 30-89 օր ժամկետանց	-	144,703	5,669	-	-	150,372
- 90 օրից ավել և մինչև 270 օր ժամկետանց	-	-	3,270,303	-	-	3,270,303
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	905,983	-	471,844	1,377,827
Ընդամենը իրավաբանական անձանց տրված համախառն վարկեր	287,295,067	5,753,811	5,274,980	9,560,618	17,456,906	325,341,382
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(2,124,144)	(642,660)	(2,899,427)	-	-	(5,666,231)
Ընդամենը իրավաբանական անձանց տրված զուտ վարկեր	285,170,923	5,111,151	2,375,553	9,560,618	17,456,906	319,675,151

2018թ.**						
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Չեղբերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Անհատներին տրված վարկեր						
Ոսկու գրավադրմամբ վարկեր						
- ոչ ժամկետանց	32,220,339	1,230,118	-	-	-	33,450,457
- մինչև 30 օր ժամկետանց	444,590	118,652	-	-	-	563,242
- 30-89 օր ժամկետանց	-	457,329	7,837	-	-	465,166
- 90-179 օր ժամկետանց	-	-	289,050	-	-	289,050
- 180-270 օր ժամկետանց	-	-	276,154	-	-	276,154
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	138,898	-	-	138,898
Ընդամենը համախառն ոսկու գրավադրմամբ վարկեր	32,664,929	1,806,099	711,939	-	-	35,182,967
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(196,653)	(91,263)	(433,954)	-	-	(721,870)
Ընդամենը զուտ ոսկու գրավադրմամբ վարկեր	32,468,276	1,714,836	277,985	-	-	34,461,097
Վարկային քարտեր						
- ոչ ժամկետանց	40,461,668	596,286	-	305,039	-	41,362,993
- մինչև 30 օր ժամկետանց	699,446	107,143	-	-	-	806,589
- 30-89 օր ժամկետանց	-	827,439	8,266	-	-	835,705
- 90-179 օր ժամկետանց	-	-	1,354,533	-	-	1,354,533
- 180-270 օր ժամկետանց	-	-	1,364,024	-	-	1,364,024
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	846,392	-	-	846,392
Ընդամենը համախառն վարկային քարտեր	41,161,114	1,530,868	3,573,215	305,039	-	46,570,236
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(1,488,243)	(501,722)	(1,716,658)	-	-	(3,706,623)
Ընդամենը զուտ վարկային քարտեր	39,672,871	1,029,146	1,856,557	305,039	-	42,863,613
Հիփոթեքային վարկեր						
- ոչ ժամկետանց	32,799,057	346,943	1,202	-	-	33,147,202
- մինչև 30 օր ժամկետանց	290,673	72,000	-	-	-	362,673
- 30-89 օր ժամկետանց	-	198,247	-	-	-	198,247
- 90-179 օր ժամկետանց	-	-	125,431	-	-	125,431
- 180-270 օր ժամկետանց	-	-	174,152	-	-	174,152
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	898,392	-	-	898,392
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	33,089,730	617,190	1,199,177	-	-	34,906,097
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(57,656)	(12,739)	(62,437)	-	-	(132,832)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	33,032,074	604,451	1,136,740	-	-	34,773,265
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ վարկեր						

	2018թ.**					
	Փուլ 1 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 2 Չարժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Փուլ 3 Արժեզրկված ֆինանսական ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնաս հազ. դրամ	Չեղբերված կամ տրամադրված արժեզրկված սկզբնական ճանաչման պահին հազ. դրամ	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
- ոչ ժամկետանց	23,519,396	368,131	-	21,137	-	23,908,664
- մինչև 30 օր ժամկետանց	468,998	77,065	-	-	-	546,063
- 30-89 օր ժամկետանց	-	406,258	3,029	-	-	409,287
- 90-179 օր ժամկետանց	-	-	371,830	-	-	371,830
- 180-270 օր ժամկետանց	-	-	323,617	-	-	323,617
- ավելի քան 270 օր ժամկետանց*	-	-	494,167	-	-	494,167
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ համախառն վարկեր	23,988,394	851,454	1,192,643	21,137	-	26,053,628
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(568,647)	(161,370)	(338,810)	-	-	(1,068,827)
Ընդամենը անհատներին տրված սպառողական և այլ գույտ վարկեր	23,419,747	690,084	853,833	21,137	-	24,984,801
Ընդամենը անհատներին տրված համախառն վարկեր	130,904,167	4,805,611	6,676,974	326,176	-	142,712,928
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(2,311,199)	(767,094)	(2,551,859)	-	-	(5,630,152)
Ընդամենը անհատներին տրված գույտ վարկեր	128,592,968	4,038,517	4,125,115	326,176	-	137,082,776
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	418,199,234	10,559,422	11,951,954	9,886,794	17,456,906	468,054,310
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստ	(4,435,343)	(1,409,754)	(5,451,286)	-	-	(11,296,383)
Ընդամենը հաճախորդներին տրված գույտ վարկեր	413,763,891	9,149,668	6,500,668	9,886,794	17,456,906	456,757,927

* Վերը ներկայացված աղյուսակում նշված անհատներին տրված ավելի քան 270 օր ժամկետանց վարկերի համար արժեզրկումից կորուստը գրանցվում է ուղղակիորեն կրեդիտագրելով վարկի գումարը՝ առանց արժեզրկման գծով պահուստը օգտագործելու:

** Վերը ներկայացված աղյուսակում ներառված է վարկային քարտերի և օվերդրաֆտների գծով վարկային պարտավորվածությունների սպասվող պարտքային վնասը:

30.09.2019					
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Չեռքբերված, տրամադրված կամ արժեզրկված սկզբնական ճանաչման պահին	Ընդամենը
Կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկեր ամորտիզացված արժեքով հաշվառվող--համախառն արժեք					
Մնացորդը հուլիսի 1-ի դրությամբ	256,658,579	6,474,128	3,899,852	8,572,513.24	275,605,072
Փոխանցում 1-ին փուլ	914,564	(902,062)	(12,502)	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	(6,396,027)	6,410,736	(14,709)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(29,633)	(76,600)	106,234	-	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(44,877,883)	(22,904)	(141,163)	(46,362)	(45,088,313)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	35,845,334	515	73,758	-	35,919,607
Դուրսգրումներ	-	-	(37,928)	-	(37,928)
Մնացորդը սեպտեմբերի 30-ի դրությամբ	242,114,933	11,883,813	3,873,542	8,526,151	266,398,439

30.09.2019					
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Չեռքբերված, տրամադրված կամ արժեզրկված սկզբնական ճանաչման պահին	Ընդամենը
Անհատներին տրամադրված վարկեր ամորտիզացված արժեքով հաշվառվող-համախառն արժեք					
Մնացորդը հուլիսի 1-ի դրությամբ	146,609,585	8,162,502	8,250,637	326,175	163,348,899
Փոխանցում 1-ին փուլ	977,002	(850,155)	(126,847)	-	0
Փոխանցում 2-րդ փուլ	(3,871,323)	4,091,927	(220,604)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(1,093,961)	(2,275,678)	3,369,639	-	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(15,340,859)	(787,347)	(1,632,061)	-	(17,760,267)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	28,861,820	565,783	95,767	-	29,523,369
Դուրսգրումներ	(1)	-	(304,870)	-	(304,871)
Մնացորդը սեպտեմբերի 30-ի դրությամբ	156,142,263	8,907,032	9,431,659	326,175	174,807,130

2018					
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Չեռքբերված, տրամադրված կամ արժեզրկված սկզբնական ճանաչման պահին	Ընդամենը
Կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկեր ամորտիզացված արժեքով հաշվառվող--համախառն արժեք					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	245,540,807	8,398,733	6,975,936	10,811,176	271,726,652
Փոխանցում 1-ին փուլ	818,183	(784,581)	(33,602)	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	(136,118)	162,955	(26,837)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(236,564)	(2,787,199)	3,023,763	-	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(115,234,061)	237,780	(2,178,695)	(1,250,558)	(118,425,534)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	156,542,820	526,558	33,605	-	157,102,983
Դուրսգրումներ	-	(435)	(2,519,190)	-	(2,519,625)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	287,295,067	5,753,811	5,274,980	9,560,618	307,884,476

2018					
հազ. դրամ	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ	Չեռքբերված, տրամադրված կամ արժեզրկված սկզբնական ճանաչման պահին	Ընդամենը
Անհատներին տրամադրված վարկեր ամորտիզացված արժեքով հաշվառվող-համախառն արժեք					
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	97,203,156	2,400,949	4,382,085	470,089	104,456,279
Փոխանցում 1-ին փուլ	525,652	(336,754)	(188,898)	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	(2,256,732)	2,382,975	(126,243)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(3,687,442)	(801,074)	4,488,516	-	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(37,545,979)	(794,398)	(2,248,597)	(143,913)	(40,732,887)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվներ	76,665,740	1,977,751	1,820,385	-	80,463,876
Դուրսգրումներ	(228)	(23,838)	(1,450,274)	-	(1,474,340)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	130,904,167	4,805,611	6,676,974	326,176	142,712,928

(i) Իրավաբանական անձանց տրված վարկեր

Իրավաբանական անձանց տրված վարկերը ենթակա են վարկային գնահատման և արժեզրկման ստուգման անհատական հիմունքով: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի ընդհանուր վճարունակությունը վերջինիս տրամադրված վարկի պարտքայի որակի կարևոր ցուցանիշ է: Այնուամենայնիվ, գրավն ապահովում է լրացուցիչ ապահովվածություն, և Բանկը որպես կանոն գրավ է պահանջում իրավաբանական անձանցից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն իրավաբանական անձանց տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի համար ապահովություն ծառայող գրավի և ապահովության այլ միջոցների (առանց արժեզրկման) բնույթի վերաբերյալ:

	Հաճախորդներին տրված վարկեր, հաշվեկշռային արժեք	
	30.09.2019 AMD'000	31.12.2018 AMD'000
Անշարժ գույք	87,799,973	112,269,106
Հիմնական միջոցներ	41,542,466	32,225,267
Ընթացիկ հաշիվներ	35,538,912	37,034,623
Կորպորատիվ բաժնետոմսեր	29,691,145	35,235,562
Կորպորատիվ երաշխավորություններ (առանց վարկանիշի)	27,702,913	37,563,633
Պետական և տեղական կառավարման մարմինների երաշխավորություններ	20,415,397	32,119,191
Դրամական միջոցներ և ավանդներ	26,122,097	21,746,896
Պաշարներ	8,230,391	9,285,194
Այլ գրավ	1,122,191	1,018,546
Փոխադրամիջոցներ	363,589	1,153,775
Ոսկի	-	22,585
Առանց գրավի կամ ապահովության այլ միջոցի	105,244	773
Ընդամենը կորպորատիվ վարկեր	278,634,318	319,675,151

Ղեկավարությունը գտնում է, որ ժամկետանց կամ արժեզրկված վարկերի համար ապահովություն ծառայող գրավի իրական արժեքը պակաս չէ առանձին վարկերի հաշվեկշռային արժեքից: Բանկն ունի վարկեր, որոնց համար գրավի իրական արժեքը գնահատվել է վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ և չի վերանայվել՝ հետագա փոփոխություններն արտացոլելու նպատակով: Որոշ վարկերի համար գրավի իրական արժեքը վերանայվել է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է կախված այն փաստից, թե որ ամսաթվին է այն գնահատվել, եթե նման գնահատում իրականացվել է:

Մի քանի տեսակի գրավներով ապահովված վարկերի համար բացահայտվում է այն գրավը, որն առավել համապատասխանում է արժեզրկման գնահատմանը: Անհատներից, այդ թվում ՓՄՁ վարկառուների բաժնետերերից, ստացված հավաստումները չեն դիտարկվում արժեզրկման գնահատման նպատակների համար: Այդ իսկ պատճառով, նման վարկերը և մասնակիորեն ապահովված վարկերի չապահովված մասերը ներկայացվում են որպես առանց գրավի և ապահովության այլ միջոցների վարկեր: Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված վարկերի փոխհատուցելիությունը հիմնականում կախված է վարկառուների վճարունակությունից, այլ ոչ՝ գրավի արժեքից, և Բանկի համար պարտադիր չէ վերանայել գրավի գնահատումը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ii) Անհատներին տրված վարկեր

Ոսկու գրավադրմամբ վարկեր

Ոսկու գրավադրմամբ վարկերի համար ապահովություն են ծառայում ոսկյա զարդերը: Բանկի քաղաքականության համաձայն՝ ոսկու գրավադրմամբ վարկերը տրամադրվում են առավելագույնը 100% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Վարկային քարտեր

Վարկային քարտերով տրամադրված վարկերը գրավով ապահովված չեն:

Հիփոթեքային վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ վարկի տրամադրման ամսաթվի դրությամբ:

Գյուղատնտեսական վարկեր

Գյուղատնտեսական վարկերը հիմնականում գրավով ապահովված չեն:

Այլ վարկեր

Անհատներին տրված այլ վարկերի համար որպես կանոն ապահովություն են ծառայում անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն՝ այլ վարկերը տրամադրվում են առավելագույնը 60% վարկ/արժեք հարաբերակցությամբ:

(ii) Բռնագանձված գրավ

2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավը ներառում է.

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Անշարժ գույք	6,707,334	10,258,745
Այլ ակտիվներ	1,420,091	1,381,196
Ընդամենը բռնագանձված գրավ	8,127,425	11,639,941

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ բռնագանձված գրավի կազմում ներառված են 867,811 հազար դրամ գումարով ոսկյա իրեր (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 922,966 հազար դրամ):

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարված վարկի հաշվեկշռային արժեքով: Բռնագանձումից հետո բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Արժեզրկումը գնահատվում է կիրառելով շուկայական մոտեցումը: Շուկայական մոտեցումը հիմնված է մմանատիպ ակտիվների վերջերս տեղի ունեցած վաճառքների արդյունքների համեմատական վերլուծության կամ մմանատիպ ակտիվների վաճառքի հայտարարված գների վրա, կիրառելով 20%-ից 40% զեղչ վաճառքի հայտարարված գների նկատմամբ՝ կախված ակտիվի բնույթից և գտնվելու վայրից:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում:

(դ) Գրավադրված ակտիվներ

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 45,945,499 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 66,895,775 հազար դրամ) ծառայում են որպես գրավ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի համար (Ծանոթագրություն 17):

(գ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության հետևյալ ճյուղերում.

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի համար:

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Էներգետիկայի ոլորտ	58,318,832	62,115,153
Առևտուր	43,270,429	37,809,928
Ծառայություն	35,065,868	31,043,682
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	28,029,018	39,100,819
Շինարարություն	16,720,571	33,924,961
Հեռահաղորդակցություն	21,597,934	25,139,754
Սննդի և խմիչքի արտադրություն	23,335,403	21,292,386
Հյուրանոցային ոլորտ	15,812,598	27,684,650
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր	8,283,304	8,800,888
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	8,577,063	9,396,734
Պետական և տեղական կառավարման մարմիններ	7,940,891	10,914,700
Արդյունաբերություն	6,097,929	6,537,550
Հիմնադրամներ	-	981,124
Տրանսպորտ	252,815	703,609
Այլ	10,534,351	9,895,444
Անհատներին տրված վարկեր	174,807,130	142,712,928
	458,644,136	468,054,310
Արժեզրկման գծով պահուստ	(13,576,930)	(11,296,383)
	445,067,206	456,757,927

Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 22-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը: Քանի որ Բանկը տրամադրում է կարճաժամկետ վարկեր, հավանական է, որ դրանցից շատերը կվերանայվեն ժամկետի ավարտից հետո: Այդ իսկ պատճառով, վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն ավելի երկար լինել պայմանագրային պայմաններով համաձայնեցված ժամկետայնությունից:

14 Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	18,434,346	3,586,870
Կորպորատիվ պարտատոմսեր	-	1,721,964
	18,434,346	5,308,834
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	19,516,450	26,441,606
Կորպորատիվ պարտատոմսեր	6,417,229	4,908,615
	25,933,679	31,350,221
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	44,368,025	36,659,055
Հնարավոր կորուստների պահուստ	(138,866)	(114,749)
	44,229,159	36,544,306

15 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Սարքավորո ւմներ	Տնտեսական գույք	Փոխադրա- միջոցներ	Անավարտ շինարարություն	Վարձակալված գույքի բարելավում	Ոչ նյութական ակտիվներ	Վարձակալված տարածքների օտագ. իրավունք	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք									
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	9,406,025	2,274,774	1,723,828	266,422	233,767	659,693	1,358,040	-	15,922,549
Ավելացումներ	4,337	36,631	96,287	3,394	176,964	60,606	302,256	2,237,194	2,917,668
Օտարումներ		(2,240)	(44,684)						(46,924)
Փոխանցումներ	96,593				(96,593)				-
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2019թ.	9,506,954	2,309,165	1,775,430	269,816	314,138	720,299	1,660,296	2,237,194	18,793,292
Մաշվածություն և ամորտիզացիա									
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	152,985	1,136,074	1,003,889	174,825	-	420,260	549,605	-	3,437,638
Մաշվածություն և ամորտիզացիա	111,773	214,930	132,498	14,035		26,234	223,387	332,598	1,055,455
Օտարումներ		(2,240)	(42,627)						(44,867)
Մնացորդը առ 30 սեպտեմբերի 2019թ.	264,758	1,348,764	1,093,759	188,860	-	446,494	772,992	332,598	4,448,226
Հաշվեկշռային արժեք									
Առ 30 սեպտեմբերի 2019թ.	9,242,196	960,401	681,671	80,956	314,138	273,805	887,303	1,904,596	14,345,066

հազ. դրամ	Հոդ և շենքեր	Սարքավորում ներ	Տնտեսական գույք	Փոխադրա- միջոցներ	Անավարտ շինարարություն	Վարձակալված գույքի բարելավում	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք								
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	9,327,200	2,229,818	1,599,084	261,834	158,496	720,553	1,035,493	15,332,478
Ավելացումներ	8,622	286,124	297,153	4,588	235,149	31,063	322,547	1,185,246
Օտարումներ	(89,675)	(241,168)	(172,409)	-	-	(91,923)	-	(595,175)
Փոխանցումներ	159,878	-	-	-	(159,878)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	9,406,025	2,274,774	1,723,828	266,422	233,767	659,693	1,358,040	15,922,549
Մաշվածություն և ամորտիզացիա								
Մնացորդը առ 1 հունվարի 2018թ.	-	995,046	968,322	153,847	-	375,071	314,790	2,807,076
Մաշվածություն և ամորտիզացիա	152,985	283,913	137,461	20,978	-	57,714	234,815	887,866
Օտարումներ	-	(142,885)	(101,894)	-	-	(12,525)	-	(257,304)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	152,985	1,136,074	1,003,889	174,825	-	420,260	549,605	3,437,638
Հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2018թ.	9,253,040	1,138,700	719,939	91,597	233,767	239,433	808,435	12,484,911

Շենքերի իրական արժեքը վերջին անգամ որոշվել և գրանցվել է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ անկախ լիցենզավորված գնահատողի՝ «Ֆինլոու» ՍՊԸ-ի կողմից իրականացված գնահատման հիման վրա: Իրական արժեքը որոշվել է օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ պայմաններով անշարժ գույքի համար հայտարարված վաճառքի գների հիման վրա, կիրառելով 0.80-ից 0.95 տիրույթում ընկած գործակիցներ՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից տարբերությունների (առկայության դեպքում) հետ կապված ելակետային գները ճշգրտելու համար: Հոդի և շենքերի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին, քանի որ կիրառվող գնահատման տեխնիկայի դիտարկելի ելակետային տվյալների գծով կատարվել են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ (գործակիցներ):

16 Այլ ակտիվներ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Այլ ստացվելիք գումարներ	447,659	390,695
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	447,659	390,695
Հնարավոր կորուստների պահուստ	(48,604)	(33,675)
Ընդամենը զուտ ֆինանսական ակտիվներ	399,055	357,020
Կանխավճարներ	458,773	584,396
Նյութեր և պաշարներ	184,494	135,489
Այլ բռնագանձված ակտիվներ	1,420,091	1,381,196
Այլ	1,308,709	302,907
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	3,372,067	2,403,988
Ընդամենը այլ ակտիվներ	3,771,122	2,761,008

17 Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Վարկեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	145,145,853	143,010,113
– կարճաժամկետ	36,716,785	45,493,470
– երկարաժամկետ	108,429,068	97,516,642
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	40,207,453	53,565,769
Լորո հաշիվներ	139,109	116,656
Այլ	111,836	210,628
	185,604,250	196,903,166

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկում միջոցներ ունեն տեղաբաշխած վեց ֆինանսական կազմակերպություն (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ յոթ ֆինանսական կազմակերպություն), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 121,140,636 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 160,302,097 հազար դրամ):

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի կազմում ներառված են 61,155,192 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 66,405,905 հազար դրամ) գումարով վարկեր, որոնք նախատեսված են որոշակի պահանջները բավարարող վարկերի համար դիմող վարկառուներին վերավարկավորելու համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի կառուցվածքը ըստ վերավարկավորման նպատակային ուղղվածության.

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
- Առևտրի ֆինանսավորում	74,172,003	54,681,487
- ՓՄՁ վարկեր	37,615,666	42,297,420
- ՀԷԿ կառուցում	6,516,122	7,814,363
- Հիփոթեքային վարկեր	14,387,490	13,464,507
- Ընթացիկ վարկեր բանկերից	9,818,657	21,922,720
- Գյուղատնտեսական վարկեր	651,385	647,780
- Այլ (կրթություն, կենցաղային)	1,984,528	2,181,835
	145,145,852	143,010,112

18 Թողարկված պարտքային արժեթղթեր

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի թողարկված 39,690,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսեր («2020թ. պարտատոմսեր»): Պարտատոմսերը ցուցակված են Իռլանդիայի ֆոնդային բորսայում:

2015թ. հուլիսին Բանկը Նիդեռլանդներում գտնվող «Dilijan Finance B.V» հատուկ նշանակության ընկերության միջոցով թողարկել է 100,000,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսեր («2020թ. պարտատոմսեր»), որոնց մարման ժամկետը լրանում է 2020թ. հուլիսին: Պարտատոմսերը ցուցակված են Իռլանդիայի ֆոնդային բորսայում:

2019թ. հունիս ամսին Բանկը թողարկել է 100.00 ԱՄՆ դոլար, 100.00 Էվրո, 10,000.00 ՀՀ դրամ անվանական արժեքներով, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսեր: Պարտատոմսերի քանակը կազմում է առավելագույնը՝ 600,000 (վեց հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 60,000 (վաթսուն հազար) հատ Էվրոյով, 400,000 (չորս հարյուր հազար) հատ ՀՀ դրամով: 2019թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ Բանկը տեղաբաշխել է 10,419,200 (տաս միլիոն չորս հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ԱՄՆ դոլար և 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքներով պարտատոմսեր: Բանկի թողարկված պարտատոմսերի մասին լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ Բանկի ինտերնետային կայք էջում:

19 Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցախհանջ ավանդներ		
- Անհատներ	27,201,270	26,492,368
- Իրավաբանական անձինք	77,573,524	74,612,009
Ժամկետային ավանդներ		
- Անհատներ	166,050,531	166,735,070
- Իրավաբանական անձինք	108,635,166	99,342,934
	379,460,491	367,182,381

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկում պահվող հաճախորդների ավանդների և ընթացիկ հաշվիների 38,395,615 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 37,569,823 հազար դրամ) գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և չճանաչված վարկային գործիքների համար:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Բանկն ունի 9 հաճախորդ (31 դեկտեմբերի 2018թ.՝ յոթ հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 111,166,523 հազար դրամ (31 դեկտեմբերի 2018թ. 95,139,359 հազար դրամ):

20 Այլ պարտավորություններ

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	506,061	448,650
Մատակարարներին վճարվելիք գումարներ	232,548	258,475
Պարտավորություններ տարածքների վարձակալության գծով (\$ՀՄՍ 16)	1,945,711	-
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,684,320	707,125
Այլ վճարվելիք հարկեր	469,072	366,984
Հետաձգված եկամուտ	101,090	110,627
Ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գծով պարտավորություններ	146,243	145,677
Խնդրահարույց պայմանագրերի պահուստ	94,870	94,870
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,570,694	884,082
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	2,381,968	1,602,240
Ընդամենը այլ պարտավորություններ	5,066,288	2,309,365

21 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 502,272 սովորական բաժնետոմսից (2017թ. դեկտեմբերի 31-ին՝ 502,272) և 20,000 փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100,000 դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 100,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահութաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Պահուստների բնույթը և նպատակը

Հողի և շենքերի վերագնահատումից աճ

Հողի և շենքերի վերագնահատումից աճը ներառում է հողի և շենքերի վերագնահատված կուտակային դրական արժեքը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային գուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաճանաչումը կամ արժեզրկումը:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Բանկի առավելագույն չբաշխված շահույթի չափով: 2019թ. ընթացքում Բանկը հայտարարել է 100,822 հազար դրամի շահաբաժին և վճարել 58,945 հազար դրամ:

22 Ռիսկերի կառավարում

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարումն էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը և գործառնական ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Բանկը:

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Բանկի Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու նպատակով: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման բաժնի ղեկավարը ուղղակիորեն հաշվետու է Վարչության նախագահին և անուղղակիորեն՝ Բանկի Խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե՛ պորտֆելի և թե՛ առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) կողմից: Որոշումների կայացմանը գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից և տեսակից:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական

վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման բաժինը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը, կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը ձեռք բերելու համար:

Բանկի ներքին փաստաթղթերի համաձայն՝ Ռիսկերի կառավարման բաժինը և ներքին աուդիտի բաժինը հաճախ պատրաստում են Բանկի էական ռիսկերին անդրադարձող հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են դիտարկումներ Բանկի ընթացակարգերի և մեթոդաբանության արդյունավետության գնահատման վերաբերյալ և առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույթի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույթի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արատարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն, որը գլխավորում է Նախագահը: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից՝ Ռիսկերի կառավարման բաժնի առաջարկությունների հիման վրա:

Բանկը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույթների, ժամկետայնության, արտարժույթի դիրքերի և վնասի սահմանաչափերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Վարչության կողմից:

(գ) Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույթների փոփոխության արդյունքում: Բանկը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույթների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույթների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույթների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույթի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույթների ճեղքվածքների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույթների ճեղքվածքների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
30 սեպտեմբերի 2019թ.							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	30,906,344					74,229,319	105,135,663
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	556,912	54,247	625,453	8,801,018	4,142,696	189,984	14,370,310
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	22,972,714	-	10,391,225	60,687	-	2,571,514	35,996,140
Հաճախորդներին տրված վարկեր	157,656,554	29,431,997	57,039,028	135,358,552	65,581,075		445,067,206
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	1,369,599	427,881	1,746,641	29,052,656	11,632,382		44,229,159
Ընդամենը	213,462,124	29,914,125	69,802,347	173,272,913	81,356,153	76,990,817	644,798,478
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	98,265,934	21,843,824	20,463,325	34,782,070	9,998,152	250,945	185,604,250
Թողարկված պարտքային արժեթղթեր		9,582,152	9,552,928	6,259,642	-		25,394,722
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	178,988,572	47,456,659	76,941,696	73,378,307	2,695,257	-	379,460,491
	277,254,506	78,882,634	106,957,949	114,420,020	12,693,409	250,945	590,459,462
Ընդամենը	(63,792,382)	(48,968,509)	(37,155,602)	58,852,893	68,662,744	76,739,872	54,339,016

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբեր 2018							
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	20,541,179	-	-	-	-	93,925,395	114,466,574
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	17,235,413	1,892,145	9,640,859	-	-	2,388,587	31,157,004
Հաճախորդներին տրված վարկեր	193,385,763	59,854,950	34,928,739	123,585,076	45,003,399	-	456,757,927
Ներդրումային արժեթղթեր	587,922	1,067,587	1,591,258	23,988,338	14,339,568	189,184	41,763,857
	231,750,277	62,814,682	46,160,856	147,573,414	59,342,967	96,503,166	644,145,362
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	101,124,344	25,387,816	21,119,144	37,250,437	11,694,141	327,284	196,903,166
Թողարկված պարտքային արժեթղթեր	11,431,116	-	9,914,456	19,828,913	-	-	41,174,485
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	171,166,243	63,172,834	85,017,598	44,670,543	3,155,163	-	367,182,381
	283,721,703	88,560,650	116,051,198	101,749,893	14,849,304	327,284	605,260,032
	(51,971,426)	(25,745,968)	(69,890,342)	45,823,521	44,493,663	96,175,882	38,885,330

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	30.09.2019			31.12.2018		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
- Նոստրո հաշիվներ բանկերում	-	0.05%-1.6%	-1%-8%	-	0.05%-1.6%	-1%-8%
- Օվերնայթ հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	4.50%	-	-	4.50%	-	-
- Օվերնայթ այլ բանկերի հետ	-	1.80%	-	-	1.80%	-
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ						
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	6.37%	3.00%	-	6.72%	-	-
- Երաշխիքների դիմաց գրավադրված միջոցներ ոչ ռեզիդենտ բանկում	-	2.00%	-	-	2.00%	-
- Հաճախորդներին տրված վարկեր	13.86%	8.88%	8.12%	12.90%	9.10%	6.30%
Ներդրումային արժեթղթեր						
- Ամորտիզացված արժեթուղի հաշվառվող արժեթղթեր	8.81%	5.27%	5.00%	9.17%	5.27%	5.00%
- Իրական արժեթուղի՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթեր	8.12%	-	-	8.82%	-	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ						
- Վարկեր բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	6.82%	5.49%	1.42%	7.05%	5.69%	1.16%
- Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	5.81%	-	-	6.20%	-	-
- Թողարկված պարտքային արժեթղթեր	-	14.90%	-	-	14.90%	-
- Թողարկված պարտքային արժեթղթեր-այլ	10.50%	5.50%	-	-	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցայահանջ ավանդներ	0,1%-5,4%	0%-3,6%	0%-3,2%	0%-5%	0%-3%	0%-3%
- Ժամկետային ավանդներ	9.25%	4.53%	3.47%	9.02%	4.92%	3.39%

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխության (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության բոլոր կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2018թ. և 2019թ սեպտեմբերի 30-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ աճ	(733,055)	(523,981)
100 բկ զուգահեռ նվազում	733,055	523,981

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2019թ սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	30.09.2019թ. հազ. դրամ		31.12.2018թ. հազ. դրամ	
	Մեփական հազ. դրամ	կապիտալ	Մեփական հազ. դրամ	կապիտալ
100 բկ զուգահեռ նվազում		586,966		187,535
100 բկ զուգահեռ աճ		(586,966)		(187,535)

(դ) Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Բանկը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	30.09.2019			
	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,837,152	33,218,110	1,683,621	66,738,884
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Բանկերին և ֆինասական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	13,094,833	573	255,942	13,351,348
Հաճախորդներին տրված վարկեր	191,403,732	40,904,937	3,668,373	235,977,042
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	7,419,416	1,582,136	-	9,001,552
Ընդամենը ակտիվներ	243,755,133	75,705,756	5,607,936	325,068,826
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ	90,793,577	3,958,577	63	94,752,217
Թողարկված պարտքային արժեթղթեր	23,885,682	-	-	23,885,682
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	175,389,936	24,871,974	6,310,410	206,572,320
Ընդամենը պարտավորություններ	290,069,194	28,830,551	6,310,473	325,210,218
Արտահաշվեկշռային միավորներ				
Արտարժույթի սվոպ	(45,290,615)	48,602,235	1,318,651	4,630,270
Արտարժույթի ֆորվարդ	(882)			(882)
Ընդամենը արտահաշվեկշռային պարտավորություններ	(45,291,498)	48,602,235	1,318,651	4,629,388
Զուտ դիրքը	(1,022,563)	(1,727,030)	(2,021,187)	(4,770,780)

31.12.2018

	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,892,967	32,685,224	1,595,514	54,173,705
Բանկերին և ֆինասական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	10,926,620	5,454	374,575	11,306,649
Հաճախորդներին տրված վարկեր	231,361,473	36,203,425	3,206,626	270,771,524
Ներդրումային արժեթղթեր	12,137,278	1,671,399	-	13,808,677
Ընդամենը ակտիվներ	274,318,338	70,565,502	5,176,715	350,060,555
ՍՈՑԻԱԼԻԱԿԱՆ ԵՎ ԲԵՐՈՒՄԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐ				
Արտարժույթի սվոպ	3,404,397	-	3,345,974	6,750,371
Արտարժույթի ֆորվարդ	13,236,362	-	3,401,409	16,637,771
Ընդամենը արտահաշվեկշռային ակտիվներ	16,640,759	-	6,747,383	23,388,142
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի փոխառություններ և այլ մնացորդներ	80,080,530	7,002,091	59	87,082,680
Թողարկված պարտքային արժեթղթեր	41,174,485	-	-	41,174,485
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	165,420,327	51,670,274	7,731,898	224,822,499
Ընդամենը պարտավորություններ	286,675,342	58,672,365	7,731,957	353,079,664
Արտահաշվեկշռային միավորներ				
Արտարժույթի սվոպ	3,387,973	-	3,346,356	6,734,329
Արտարժույթի ֆորվարդ	3,546,371	12,567,855	2,279,739	18,393,965
Ընդամենը արտահաշվեկշռային պարտավորություններ	6,934,344	12,567,855	5,626,095	25,128,294
Զուտ դիրքը	(2,650,589)	(674,718)	(1,433,954)	(4,759,261)

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	(102,256)	(265,059)
Եվրոյի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	(172,703)	(67,472)

(ե) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը՝ վարկային ռիսկն ակտիվորեն վերահսկելու նպատակով: Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Վարկային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկերի փաստաթղթավորման պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Իրավաբանական անձանց վարկային դիմումները պատրաստվում են հաճախորդների հետ աշխատող մենեջերների կողմից և փոխանցվում են Վարկային բաժնի, որը պատասխանատու է իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Վերլուծական հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության կառուցվածքային վերլուծության և ֆինանսական արդյունքների վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման բաժնի կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Վարկային կոմիտեն ուսումնասիրում է վարկի դիմումը՝ Կորպորատիվ վարկերի բաժնի և Ռիսկերի կառավարման բաժնի կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Վարկային կոմիտեի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Բանկի իրավաբանական, հ հաշվապահական հաշվառման և հարկային բաժինների կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Անհատների վարկային դիմումներն ուսումնասիրվում են Անհատական վարկավորման ծառայությունների բաժնի կողմից՝ կիրառելով Ռիսկերի կառավարման բաժնի հետ համատեղ մշակված գնահատման մոդելները և դիմումների տվյալների ստուգման ընթացակարգերը:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա: Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ կանխիկի	91,434,113	100,884,355
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	35,996,139	31,157,004
Հաճախորդներին տրված վարկեր	445,067,206	456,757,927
Ներդրումային արժեթղթեր	58,599,469	41,574,673
Այլ ֆինանսական ակտիվներ	399,055	357,020
Վարկային ռիսկին ենթարկվածության ընդհանուր առավելագույն չափը	631,495,983	630,730,979

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների, բանկերին տրված վարկերի և փոխատվությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետզման և արժեթղթերի փոխառության գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և այդ վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 14-ում:
Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, թե՛ ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալ քլիրինգային պայմանագրերը, հետզման գլխավոր պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետզման պայմանագրերը, հակադարձ վաճառքի և հետզման պայմանագրերը և արժեթղթերի՝ որպես փոխառության ստացման և տրամադրման պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքներ, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետզման, հակադարձ վաճառքի և հետզման պայմանագրերի գծով: Նման գրավի համար գործում են տվյալ ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության դեպքում:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտականությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	22,972,714	-	22,972,714	(22,972,714)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	22,972,714	-	22,972,714	(22,972,714)	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(40,207,453)	-	(40,207,453)	40,207,453	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(40,207,453)	-	(40,207,453)	40,207,453	-	-

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա, իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Ֆին. գործիքներ (դրամական միջոցներից տարբեր գրավ)	Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Զուտ գումար
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	19,187,413	-	19,187,413	(19,187,413)	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	19,187,413	-	19,187,413	(19,187,413)	-	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(53,565,769)	-	(53,565,769)	53,565,769	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(53,565,769)	-	(53,565,769)	53,565,769	-	-

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով:

Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Վարչության կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է, թողարկվող պարտքային արժեթղթերը, այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական կորպորատիվ հաճախորդների և անհատների ավանդները, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը գործարար ստորաբաժանումներից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրական նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ խմբում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքն օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սքրես թեսթերը» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների տեսանկյունից: Սովորական շուկայական պայմաններում իրացվելիության դիրքի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են վերադաս ղեկավարությանը շաբաթական կտրվածքով: Իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿԿ-ի կողմից և իրականացվում են Գանձապետարանի կողմից:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցախհանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	105,135,663	-	-	-	-	-	-	105,135,663
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	556,912		679,700	8,801,018	4,142,696	189,984		14,370,310
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	23,922,633		10,391,226	60,687	-	710,077	911,519	35,996,142
Հաճախորդներին տրված վարկեր	55,425,682	31,318,366	89,472,542	175,642,038	83,464,106	-	9,744,472	445,067,206
Անորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	1,335,581	38,582	2,169,958	29,052,656	11,632,382	-	-	44,229,159
Բռնագանձված գույք	-	-	-	-	-	6,707,334	-	6,707,334
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	14,345,066	-	14,345,066
Ընթացիկ հարկային ակտիվներ	-	-	655,956	-	-	-	-	655,956
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	2,109,124	-	2,109,124
Այլ ակտիվներ	621,129	535,314	1,194,586	-	-	1,420,092	-	3,771,121
Ընդամենը ակտիվներ	186,997,601	31,892,262	104,563,968	213,556,399	99,239,184	25,481,677	10,655,991	672,387,081
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	30,266,409	26,788,418	65,918,527	52,632,743	9,998,152	-	-	185,604,250
Թողարկված պարտքային արժեթղթեր		29,224	19,105,855	6,259,642	-	-	-	25,394,722
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	128,520,830	48,628,709	124,398,355	73,378,307	2,695,257	1,839,033	-	379,460,491
Ընթացիկ հարկային պարտավորություններ	-	-	955,090	-	-	-	-	955,090
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	-	-	-
Այլ պարտավորություններ	506,061	634,020	101,090	1,945,711	-	1,879,406	-	5,066,288
Ընդամենը պարտավորություններ	159,293,300	76,080,371	210,478,918	134,216,403	12,693,409	3,718,439	-	596,480,840
Զուտ դիրքը	27,704,301	(44,188,109)	(105,914,950)	79,339,995	86,545,775	21,763,238	10,655,991	75,906,240

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունը՝ ըստ մարման ակնկալվող ժամկետների:

հազ. դրամ	Ցայահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	114,466,574	-	-	-	-	-	-	114,466,574
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	17,675,938	-	11,590,841	-	-	955,398	934,827	31,157,004
Հաճախորդներին տրված վարկեր	67,696,449	45,934,986	92,461,288	159,010,347	83,182,574	-	8,472,283	456,757,927
Ներդրումային արժեթղթեր	-	587,922	2,658,845	23,988,338	14,339,568	189,184	-	41,763,857
Բռնագանձված գույք	-	-	-	-	-	10,258,745	-	10,258,745
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	12,484,911	-	12,484,911
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	3,304,293	-	3,304,293
Ընթացիկ հարկային ակտիվ	-	34,434	-	-	-	-	-	34,434
Այլ ակտիվներ	861,485	262,882	255,447	-	-	1,381,194	-	2,761,008
Ընդամենը ակտիվներ	200,700,446	46,820,224	106,966,421	182,998,685	97,522,142	28,573,725	9,407,110	672,988,753
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ և այլ փոխառություններ	63,079,324	8,789,318	38,730,036	74,512,579	11,791,909	-	-	196,903,166
Թողարկված պարտքային արժեթղթեր	11,431,116	-	9,914,456	19,828,913	-	-	-	41,174,485
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	130,031,648	41,134,595	148,190,432	44,670,543	3,155,163	-	-	367,182,381
Այլ պարտավորություններ	707,125	-	-	-	-	1,602,240	-	2,309,365
Ընդամենը պարտավորություններ	205,249,213	49,923,913	196,834,924	139,012,035	14,947,072	1,602,240	-	607,569,397
Զուտ դիրքը	(4,548,767)	(3,103,689)	(89,868,503)	43,986,650	82,575,070	26,971,485	9,407,110	65,419,356

23 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ առևտրային բանկերի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշի («կապիտալի համարժեքության ցուցանիշ») նվազագույն մակարդակը կազմում էր 12% (31 դեկտեմբերի 2018թ.՝ 12%): 2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը 2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	30.09.2019թ. հազ. դրամ Աուդիտ չանցած	31.12.2018թ. հազ. դրամ Աուդիտ անցած
Հիմնական կապիտալ		
Հիմնական կապիտալ	83,127,334	76,938,057
Նվազեցումներ	(13,179,732)	(17,667,726)
Ընդամենը հիմնական կապիտալ	69,947,602	59,270,331
Լրացուցիչ կապիտալ		
Լրացուցիչ կապիտալ	6,092,804	5,864,911
Նվազեցումներ	(711,063)	(633,137)
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	5,381,741	5,231,773
Ընդամենը կապիտալ	75,329,343	64,502,104
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվները՝ ներառյալ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը	491,630,796	496,125,711
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	15.3%	13.0%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Բազել II-ի մոտեցման համաձայն հաշվարկված ընդհանուր կապիտալի համարժեքության գործակիցը 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմում է 17.5 % (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15.6% (չստուգված), իսկ հիմնական կապիտալի համարժեքության գործակիցը՝ 15.4 % (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13.8% չստուգված)):

24 Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի սահմանաչափերի և օվերդրաֆտների գծով պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումն երրորդ անձանց հանդեպ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև հինգ տարի: Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխավորությունների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման նույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են վարկային պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կճանաչվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրային պարտականությունները:

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	24,961,241	16,794,720
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	7,427,968	8,720,789
Չօգտագործված օվերդրաֆտներ	4,981,604	4,069,808
Երաշխավորություններ և ակրեդիտիվներ	29,517,661	31,016,830
	66,888,474	60,602,147

Վերը ներկայացված ընդհանուր պայմանագրային պարտավորվածությունները պարտադիր չէ որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը: Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածությունների մեծամասնությունն իրենց չի ներկայացնում միանշանակ պարտավորվածություն Բանկի կողմից:

25 Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես վարձակալ

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

	30.09.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	469,146	429,986
Մեկից հինգ տարի ժամկետով	1,429,537	1,432,519
Ավելի քան հինգ տարի ժամկետով	243,957	360,720
	2,142,640	2,223,225

Բանկը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը որպես կանոն կազմում է հինգից տաս տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարների չափը սովորաբար ավելանում է տարեկան կտրվածքով՝ շուկայի միտումներն արտացոլելու նպատակով: Այս վարձակալություններից ոչ մեկը պայմանական վարձավճար չի ներառում:

26 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(բ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

27 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Արինա Գրուպ» ՍՊԸ-ն (նախկին «Բիզնես ներդրումների կենտրոն» ՍՊԸ-ն): Բանկի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Կարեն Սաֆարյանը, ով նաև զբաղեցնում է Բանկի Խորհրդի նախագահի պաշտոնը:

Բանկի մայր կազմակերպությունը չի ներկայացնում հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Վարչության անդամների հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2019թ. սեպտեմբերի 30-ին և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանների համար:

	01.07.2019 30.09.2019	01.01.2019 - 30.09.2019	01.07.2018- 30.09.2018	01.01.2018 30.09.2018
Աշխատավարձ և պարգևավճարներ	188,860	486,033	180,625	552,763

Այս գումարները ներառում են Խորհրդի և Վարչության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ֆինանսական հաշվետվություն	վիճակի	մասին	30.09.2019թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	31.12.2018թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Հաճախորդներին տրված վարկեր			370,454	11.2%	332,841	12.6%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ			241,914	5.2%	260,070	5.1%
Վարկավորման պարտավորվածություններ			235,395	-	243,772	-

Ստորև ներկայացված են Խորհրդի և Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները 2019թ. սեպտեմբերի 30-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանների համար:

	01.07.2019- 30.09.2019	01.01.2019 - 30.09.2019	01.07.2018- 30.09.2018	01.01.2018 30.09.2018
Շահույթ կամ վնաս				
Տոկոսային եկամուտ	10,276	30,412	7,863	20,283
Տոկոսային ծախս	(2,248)	(6,462)	(1,496)	(5,981)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	2,731	4,149	733	5,599

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Բանկի հետ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները, Խորհրդի և Վարչության անդամների ընտանիքների անդամներին և Խորհրդի և Վարչության անդամների կողմից վերահսկվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2019թ. երրորդ եռամսյակում շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	-	-	5,972,151	6.9	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,864,731	11.0	-	-	297,199	2.9
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	388,262	0.2	57,406	-	275,727	5.9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ						
Վարկային պարտավորվածություններ	638,880	-	-	-	29,983	-
Երաշխավորություններ և սկրեդիտիվներ	-	-	-	-	-	-
Շահույթ (վնաս)						
Տոկոսային եկամուտ	161,889	-	122,353	-	8,663	-
Տոկոսային ծախս	(1,144)	-	(29,549)	-	(11,379)	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	68,092	-	45,487	-	271	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	-	-	(235,462)	-	-	-
Ընդհանուր վարչական ծախսեր	(63,920)	-	-	-	-	-

Ստորև ներկայացված են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2018թ.ընթացքում շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Բաժնետերեր		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ		Այլ	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
ԱԿՏԻՎՆԵՐ						
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ			29,418	10.0		
Հաճախորդներին տրված վարկեր	2,858,979	11.0			173,909	8.4
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	728,121	4.1	424,391	9.5	281,963	5.5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չճանաչված հոդվածներ						
Վարկային պարտավորվածություններ	-	-	-	-	24,606	-
Շահույթ (վնաս)						
Տոկոսային եկամուտ	497,644	-	112,060	-	13,363	-
Տոկոսային ծախս	(554)	-	(122)	-	(15,313)	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	16,897	-	64,630	-	2,204	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	-	-	(175,874)	-	(15,197)	-
Ընդհանուր վարչական ծախսեր	-	-	(85,226)	-	-	-

28 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները մմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ մմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են մմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերի, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2019թ. սեպտեմբերի 30-ի ի դրությամբ 189,984 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 189,184 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2019թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	14,180,326	-	14,180,326
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող վարկեր	-	-	17,438,567	17,438,567
	-	14,180,326	17,438,567	31,618,894

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	5,030,367	-	5,030,367
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող վարկեր	-	-	17,456,906	17,456,906
		5,030,367	17,456,906	22,487,273

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև տվորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: